

1455

809

B-88

№ 3 ԴՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ № 3
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Պրոլետարներ ըզրոր երկրների, միացէք!

Վ. ՖՐԻԶԷ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊՕԷԶԻԱՆ

ԹԱՐԳՍ. ԽՈՐԷՆ ԼՈՐԵՆՑԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ՄՈՍԿՒԱ
Տպարան Եղր. Կ. Կ. Ռ. ՄԵԼԻՍԵՆՆԵՐԻ
1918

03 JUN 2005

12 OCT 2009

809
Ֆ-88

№ 9 ԴՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Պրոլետարներ ընդդեմ երկրորդի, միացե՛ք!

Վ. ՖՐԻԶԷ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ

ՊՕԷԶԻԱՆ

ԹԱՐԳՄ. ԽՈՐԷՆ ԼՈՐԵՆՑԻ

ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ՄՈՍԿՈՎԱ

Տպարան Եղբ. Կ. և Ռ. ՄՈՒՐԱՆՈՎՆԵՐԻ

1918

10534

Գրականութեան պատմութեան սովորական ձեռնարկների մէջ պրոլետարական պոէզիան աննշան տեղ է դրաւում: Նրա մասին գրեթէ չի էլ լիշատակւում: Զարմանալի էլ չէ, դրականութեան պատմութիւն սովորաբար գրում են բուրժուական պատմաբանները—բուրժուական ընթերցողների համար: Մինչև հիմա պրոլետարական պոէզիան նոյն իսկ չատուկ ուսումնասիրութեան նիւթ չի դարձել: Այս ակնարկը, որ ընթերցողների ուշադրութեանն ենք առաջարկում, թերևս մասամբ լրացնի այդ բացը:

I

Անդրիան այն երկիրն է, որ միւսներից վաղ
թեւակոխեց կապիտալիստական զարգացման ուղին:
Այստեղ աւելի շուտ, քան միւս երկրներում, կազմեց
բանւորական դասակարգ, այդ պատճառով էլ այդ
երկիրը համարւում է բանւորական պօէզիայի որո-
րան: 19-րդ դարի 30 և 40-ական թեւականներին,
ինչպէս յայտնի է, անդլիական բանւորները ամենա-
ծանր, ամենադաժան վիճակում էին: Էնդելսն իր
«Բանւոր դասակարգի զրութիւնն Անդլիայում» զրբի
մէջ ցնցիչ տպւտւորութիւններն է հաղորդում այդ
մասին: Այսատու որութիւնը յուսահատութեան էր



հասել կապիտալիզմի շահագործումից, որի մասին ցատումով և անասելի կրքով էր խօսում Կառլէյր և նրա հետ—քաղաքական տարրեր աշխարհայեացքի դրողներ—Դիկկենս, Կինգսլէյ, միսս Գասկէլլ, Դեյ-րայելի-Բիկոնսֆիլդ։ Միաժամանակ նրանք տանջւում էին նաև հացի թանկութիւնից, որ հեռւանք էր «հացի սակագնի», այսինքն մաքսի, որ կալւածատէրերը դրել էին ներմուծող հացի վրայ, որպէս զի ձեռնտու պայմաններով վաճառեն իրենց սեփականը։ Աշխատաւորութիւնը գուրկ էր քաղաքական իրաւունքից, որովհետև 1832 թւի լեղափոխութիւնով իշխանութիւնն անցաւ միայն խոշոր բուրժուազիային, և բանւորները լեղափոխական ուղի բռնեցին։ Շարժումը սկսւեց դործադուլներով, որ անելով դարձաւ ընդհանուր անտեսական դործադուլ։ Եւ երբ վերջինս էլ չօգնեց, բանւորները անտեսականից անցան քաղաքական պայքարի։ Յօդուա ընդհանուր ընտրական իրաւունքի ընտրողական սխառեմը փոխելու համար, մանր բուրժուազիայի դաշնակցութեամբ նրանք խիստ պալքար սկսեցին։ Փողոցային գէմոնստրացիան փոխւեց երթի, որ համապատասխան պետիցիայով շարժւում էր գէպի պարլամենտ։ Շարժման ձախ թափը ազդեցութեան տակ երթը փոխւեց գինւած ապստամբութեան։ Ապստամբութիւնը ղինւորական ուժով հնչւեց հէնց այն ժամանակ, երբ արդէն ամբաստնող ուէակցիայի հարւածների տակ Եւրոպայի մայր յամաքում (1848 թ.) արնաքամ էր լինում լեղափոխութիւնը։

Այդ «Չարտիզմի էպոխա» կոչւած ժամանակաշրջանից էլ սկզբնաւորւում է պրոլետարական պօէզիան («չարտիզմ») էր կոչւում յօդուա ընդհանուր ընտրական իրաւունքի սկսւած շարժումը) Այդ տարիներն Անգլիայում հանդէս եկան մի շարք պօէտներ, որոնց ծառայութիւնն այն է, որ նրանք պօէզիայի մէջ մտցրին աշխատանքի աշխտահն իր տանջանքներով ու պալքարով։ Նրանցից ամենայայտնին, Թոմաս Խուզը, լեղափոխական չէր, այլ, աւելի շուտ բարեգործ-մարդասէր։ Նկատելով բանւորների ու բանւորուհիների ծանր վիճակը՝ նա գիմում է ոչ թէ նրանց կամքին, այլ ուժեղների սրտին։ Կարեկցութիւն զարթեցնել գէպի աշխատաւորները, — ահա այն նպատակը, որին հետամուտ էր նա։ Նրա ոտանաւորներից մէկի մէջ («Լիդայի երազը») հարուստ տիկինը երազում տեսնում է բանւորի վշտի մի մռայլ պատկեր, և զարթնելով՝ իրեն խօսք է տալիս այնուհետև բրիստոնէական սիրոյ զգացմունքներ տածել գէպի աշխատաւորները։ Թոմաս Խուզն իր ոտանաւորներով կամենում էր այսպէս տրամադրել բուրժուազիային, և, լիրաւի, այսպէս էլ տրամադրւում էր։ Նրա անհամեմատ յայտնի և մինչև օրս դեռ չբնորոշւած «Շապիկի երգը», ուր գերմանների ծանր վիճակն է նկարագրւած, ժողովրդական վերին խաւերում շարժում ստեղծեց յօդուա ասեղապործ տաժանակիր կանանց վիճակի թեթեւացման։

Այդ նոյն թւականներին հանդէս եկած միւս սոցիալական պօէտները, ինչպէս օրինակ՝ Հոնս, աւելի

շուտ ներշնչւած էին «նարոյնիկական» արամադրութեամբ, քան՝ պրոլետարական:

Նրանք քաղաքի ու արդիւնաբերութեան համուշուած թշնամիներն էին, և բանւորներին չեա էին կանչում զէպի մայր հողը, զէպի դաշտերի ու անտառների նահապետական լուծութիւնը, զէպի փոյսն ու խովը:

Այդ ժամանակաշրջանի ստեղծագործութիւններից մի բանիսը պահպանում են չորսդին եռացող լեզուախօսութեան հրեղէն հետքերը: Նրանցում բացարձակ կերպով արտփում է այն ատելութիւնը, որ բուն էր դրել շահագործման և ստրկացման ճիրաններում անօղնական թպրտացող անդլիական բանւորների սրտում:

Էնգելսն իր «Բանւոր դասակարգի դրութիւնն Անգլիայում» գրքի մէջ մեզ համար պահել է մի անյայտ պօէտի բանաստեղծութեան թարգմանութիւն, որ ատելութեամբ է շնչում ոչ միայն ձեռնարկուների, այլ և մեքենայի նկատմամբ, որը երբեմն բանւորները իրենց ստրկութեան պատճառն էին համարում:

«Թագաւոր կայ աշխարհում, ցասկոտ ցար. պօէտների ցնորը չէ նա, այլ տիրան. յայտնի է նա ամենքիս, սարուկներիս սպիտակ. իր անունն է գոլորշի: Մի ձեռք ունի նա միայն, բայց ահարկու զօրութիւն. միլիոններ է խորտակում: Նրա քրմերի ամբոխը պարզում է այդ ամենի ձեռքը, արիւնարբու քրմերի կախարդիչ թալիսմայով արիւնների ծովերից

հանում է փայլիլուն ոսկին: Դժոխային ոսկու շնորհիւ, յանուն իրենց այդ կուռքի կոխտում են ցեխի մէջ մարդկային իրաւունքները: Կանանց արցունքը՝ նրանց համար անսահման ցնծութիւնն է, իսկ տղերի լացը՝ նրանց ծիծաղն է յարուցում: Ուրեմն՝ կորչի դոլորշի արքան: Բանւոր դասակարգը կկաշկանդի նրա ամենի ձեռքերը, որոնք փայլում են ոսկու և ծիրանի արեան մէջ»:

30—40-ական թւականներին հանդէս եկած սոցիալական պօէտներից մէկը դուրս է եկել բանւորական միջավայրից: Էմիլեդէր Էյլիոտն էր նա: Արհեստով դարբին—նա չարտիզմի չափաւոր թւին էր պատկանում: Նրա կարծիքով բանւոր դասակարգը ծանր դրութեան մէջ էր ոչ թէ ձեռնարկուների հարստահարութեան, այլ հացի թանկութեան պատճառով: Նա նոյն տեսակէտին էր, ինչ տեսակէտի էր «Միութիւն հացի օրէնքների գէմ»-ը, որ ստեղծել էր անգլիական բուրժուազիան սղնւական Լէնդլորդների գէմ կուէլու համար: Որովհետեւ հացի թանկութիւնը թանկացնում էր նաեւ աշխատաւոր ձեռքերը, բուրժուազիան եռանդուն կերպով կուռւմ էր աղնականութեան գէմ, որին, վերջ ի վերջոյ յաղթեց: Է. Էյլիորդն իր պրոլետարական բանաստեղծութիւնները խորագրեց «Նրդեր հացի օրէնքի գէմ»: Նրանց մէջ չկայ «սոցիալիստական» որ և է մոտիվ: Ընդհակառակը, պատահում են բաւականին մակերեսային ու կրքոտ յարձակումներ «Կոմմունիստների» վրայ: Դրա փոխարէն սքանչելի են բանւորական

կեանքից վերցրած ոտանաւորները, արտապայտւած իղիլային, հաշտ տոնով, երբ, օրինակ, բանւորի որդին ու կինը շաբաթ երեկոյեան իրենց խղճուկ բնակարանը փառաւոր սարքում են, «ինչպէս ապարանք»:

Է. Էլլիտար վարպետ է նկարագրում խաղաղ ու լուռ տեսարանները: Սակայն «Շէֆֆիլդացի դարբինը» յօրինել է նաև այն երգը, որ չարտիստական շարժման «Մարսելիեզը» դարձաւ, այն երգը, որ սերունդների համար յաւերժացրեց անգլիական աշխատաւորութեան այն ժամանակայ գրութիւնը: Այդ ոտանաւորի վերնագիրն է՝ «Անգլիական պրոլետարի ընտանիքը»: (Ռուսերէն թարգմանել է Դ. Բալմոնտը):

Նկարագրելով բանւորի տանի գրութիւնը, որ ցնցիչ է իր սոսկումնեղով (երեսան մեռել է քաղցից, աղջիկը քաղցից փողոց է ընկել, ի լրումն այդ ամենի՝ գալիս է ոստիկանութիւնը և պարտքի փոխարէն տանում է ողորմելի կայքն ամբողջապէս), պօէտը մեղ թողնում է երես առ երես բանւորի կնոջ հետ: Յուսահատութիւնից նա խեղդում է իր ծծկեր երեխային, և դժբաղդ կնոջն ուղարկում են բանտ:

Դատաւորի առաջ յուղւած
Մայրն է տրոփում. չի ստի նա,
Որ ցնորւած կին է ահա:
Շուտ աւարտւեց դատն ահեղ.
Խեղճին տարան հրապարակ.

Օրօրւում է մարդն այնտեղ.
Տես են գալիս ամենքն արագ:
Ուրա՛, ուրա՛, կեցցէ Անգլիան,
Կեցցէ սակաղինը հացի:

Յեղափոխութեան տարիներին այս ոտանաւորն անգիր դիտէր իւրաքանչիւր չարտիստ: Փողոցային ցույցերի, փողոցներում, կռի մէջ վերջին տունը հնչում էր, որպէս բանւորական ահարկու մարտիչեղաւ:

Օ, հարուստներ, ձերն է օրէնքն աշխարհի մէջ,
Քաղցածների հառաչը միշտ ձեզ կմնայ անլսելի:
Ձեր հալեացքը դաժան է միշտ և ձեր հողին՝
չաւէտ լեղի.

Փակում էք միշտ աղքատներին մութ, ծողապատ բանտերի մէջ:

Բայց պիտի գայ մեծ վրէժի ժամն անսպառնառ...
Բանւորն ալսօր անիծում է ձեզ բոլորիդ,
Եւ նղովքն այդ ամմահական ու ճշմարիտ
Սերունդներից կանցնի սերունդ անվերջ, անծայր...

Չարտիստական չեղափոխութիւնը տապալւեց, սանձեցին բանւոր զասակարգ: Նրա ամենաակտիվ ու գիտակից ներկայացուցիչները փախան իրենց երկրից:

Կայիֆօրնիայում զանաւած ոսկու հանքերը նոր զարկ տւին կապիտալիզմի զօրաւոր զարգացման: Անգլիական բուրժուազիան արդէն պատրաստ էր զիջումներ անելու բանւորութեան, իսկ բանւորներն

իրենց հերթին պատրաստ էին հաւատարմութեամբ ազդիայի խնամակալութեանը: 60 և 70-ական թւականներին Անդլիայում «սոցիալական խաղաղութիւն» հաստատուեց: Ընդհանրապէս թուրքացաւ դատակարգային պայքարը, իսկ դրա հետ միաժամանակ ժամանակաւորապէս մեռաւ բանւորական պօէզիան— 80-ական թւականներին նորից վերածնելու համար:

«Սոցիալական խաղաղութիւնը», որով աչքան պարծենում էր անգլիական բուրժուազիան վաղստանական և եօթանասնական թւականներին, նորից փոխարինեց դատակարգային պայքարով: Նին «արիստոկրատական» տրեղ-Ունիոններին առընթեր կուլիֆիկասիոն բանւորներին պրոֆեսսիոնալ միութիւնները հասարակ պրօլետարներին աւելի մարտական, աւելի յեղափոխական միութիւններ դարձան:

Մագեց անկախ բանւորական կուսակցութիւնը — պատրաստ վարելու աշխատաւորական ինքնուրոյն քաղաքականութիւն: Դեմոկրատ ինտելլիգենցիայի մէջ Մարքսի ուսմունքը հետզհետէ համակրողների բաղմութիւն դառաւ: Հանդէս եկաւ «սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիան», յետոյ չափաւոր սոցիալիստական «Փաբիական Միութիւնը»:

Դատակարգային պայքարի լարման և սոցիալիզմի ծագման այդ տարիները Անգլիայում վերածնեց պրօլետարական պօէզիան:

Այս անգամ նա ներկայացուցիչ ունեցաւ, յանձինս 19-րդ դարի անգլիական առաջնակարգ պօէտների, յանձինս «Հոգու իսկական արիստոկրատներին»:

Պրոլետարիատի տարած փայլուն յաղթանակներից մէկն էր այդ: Նետզհետէ կարմիր դրօշակն աւելի ու աւելի վեր բարձրացնող չորրորդ դատակարգի առաջ յարգանքով խոնարհեց անենաշնորհունակ մարքերից մէկը, խօսքով ու գործով, առդանգով ու կապիտալով նրան ծառայելու պատրաստակամութեամբ:

Ուիլլիամ Մորրիսն էր այդ:

Բուրժուական-ժաղումով, հարուստ էստէտ, Ռէսկինի աշակերտ Մորրիսը մատաղ հասակում նպատակ էր դրել քչերի, «Վերին 10000-ի» համար կեանքն աշխարհային դրախտ դարձնել: Գործնական, առեւտրական շուկան նա կամենում էր վեր ածել զեղեցկութեան տօնի: Երկար տարիներ նա զեկալութում էր «Գեղարուեստական-արդիւնաբերական» ֆիրման, որ անգլիական բուրժուազիայի համար թանկարժէք, զեղարուեստական պատտուներ, նախնի ոճով կտրասիք էր պատրաստում: Որպէս պօէտ—երիտասարդ Մորրիսը յարեց այն հոսանքին, որ յայտնի էր Պրէռաֆայէլիտիզմ անունով: Կոսանք, որ ձգտում էր խորհրդաւոր ձևերով պօէզիայի մէջ վերարտադրել ժամանակակից կեանքը, հեռաւոր հեքիաթային նիւթեր ու պատկերներ:

80-ական թւականներին չորսդին եռացող հասարակական ու դատակարգային պայքարը սթամպեդեց նաև Մորրիսին իր զեղեցիկ երազներից, քչերի համար զեղեցկութիւն սաեղծելու ձգտումից: Պրէռաֆայէլիտիզմ նա դարձաւ դեմոկրատ և սոցիալիստ: Ինչպէս ինքն էլ խոստովանում էր, նա սոցիալիզմին

յարեց ո՛չ քաղաքական-բարոյական, այլ էստէտիքական նկատառումներով: Նա կսկիծով ու խղճահարութեամբ էր տեսնում, որ ժամանակակից բուրժուական հասարակութեան մէջ, ուր բուրժուազիան տարւած և շահակալական ձգտումներով, իսկ բանւորները վեր են ածւած մեքենայի, անկարելի է գեղեցկութիւն, անհնարին է զեղարւեստութիւն: Եւ այդ աւելի ևս, քանի որ, —ինչպէս թւում էր նրան, թէկուզ հէնց նւազ հիմունքներով,—երբ շուկայում թաղաւորում է Փարբիկային մեքենայի արտադրած արժան, աղեղ ապրանքը, ո՛չ արդիւնազործող բանւորի և ո՛չ էջ պայառողի զեղարւեստական ճաշակը կգարգանայ: Որպէս զի զեղարւեստը նորից փթթի փարթամ ծաղիկներով, որպէս զի նա ժողովրդական դառնայ, այսինքն «ստեղծագործութիւն ժողովրդի համար, Մորրիսի կարծիքով—անհրաժեշտ է, որ, նախ՝ Փարբիկային արդիւնաբերութիւնն իր աեղը նորից զիջի արհեստաւորականին, և երկրորդ, որ հաստատուի տնտեսական և սոցիալական յիսկատար հաւասարութիւն: Իր «Լուրեր ոչ մի տեղից» վէպի մէջ նա փառ փայլերով նկարեց ապագայ հասարակութեան պատկերը, որը ելնելու է սոցիալիստական յեղափոխութեան խորքերից, այնպիսի հասարակութեան, ուր չկայ դասակարգային բաժանում և ուր, զրա հետ միժամանակ «զագգեահը» դուրս կը շարտի մեքենան:

Ապագայ հասարակութեան վերաբերեալ սօսէտի գրած տեսիլներում շատ բան կայ հին անցեալից (արհեստի վերածնութիւն), շատ բան, որ աւելի շուտ

անցեալի յիշողութիւններ են, քան ապագայի նախատեսում:

Եւ այդ սոցիալիստական երգերը, որ զժբաղդարար զեռ չեն թարգմանւած, իրենց քերթողի յիշատակը պահում են ապագայ սերունդների համար, որոնց աչքում Մորրիս-սոցիալիստը նոյն հպարտութիւնը կլինի, ինչ որ Մորրիս-Պրէռաֆայէլիստը բուրժուական ժամանակակից սերնդի աչքում: Երգերի պէս մեղօղիկ, կրքոտ, յուսով ու ցասումով լի այդ հիմները երբեք կը գետեղւեն այն հատրնաիրութեամբ, որոնցով պիտի ծանօթանան սոցիալիստական կուլտուրայի ոգուն ու աշխարհին: Այդ երգերից մի քանիսի մէջ, օրինակ «Բանւորական քայլերդ»-ում, պարզորոշ լսւում են ցնցոտապատ ամբօխի քայլերի դոփիւնն ու ծալները, ձայները նրանց, («ովքեր տներ են կառուցում, հանդերձներ կարում և հունձն ուրիշների համար հաւաքելով՝ իրենք մնում են քաղցած ու ստրկութեան մատնւած,—այնտեղ լսւում են «ցասումը, յոյսն ու կամքն») այն բոլոր մարդկանց, որոնք մարտի ու փոթորիկների միջից քայլում են դէպի իրենց ապագա գործութիւնը, լսւում է պրոլետարական փաշտի զօրաւոր երթը, որի դրօշը—«դրօշն է աշխարհի յոյսի»:

Մորրիսի սոցիալիստական հիմների մէջ ամենայայտնին «Աշխատանքի ձայն» երգն է: Դա, յիշաւի բանւորական մի «Մարտիկէզ» է: Ամբողջապէս մի բողոք է այն քարոզների դէմ, որ բուրժուական կարգում է բանւորների զլխին. «ձգէք յոյսերը, ձգէք

արաունջները, կեանքը կմնայ, ինչպէս որ կայ,— լա-
ցի ու տառապանքի հովիտ: Ամբողջապէս մի ջերմ կոչ
է ալն, ուղղւած նրանց, ով այսօր ոչինչ է, վաղը
կը դառնայ ամեն ինչ» — ձուլւած երկաթէ կողորդա-
ների*) մէջ — յանուն զաղափարի մզսոյ պալքարի:

«Միանանք, քանի զեռ ուշ չէ, փրկութիւնը
միայն մեր մէջ է: Յուսով թեւաւորւած, լոյսով լու-
սաւորւած՝ յաղթական շարքերով, քայլում ենք յա-
ռաշ: Թող ինքնասէրները ծիծաղեն ու կատակեն,
հանոյքներ սրտան անհանգիստ հողով: Միտով բոցա-
ւորւած, մեր կեանքը մաշելով՝ մենք պատրաստ ենք
պալքարելու նոր աշխարհի համար: Միանանք, քանի
զեռ ուշ չէ: Մըրկի շունչն է ապրում երկրի վրայ,
յնցւելով՝ պողում են տիեզերքի հիմքերը: Բայց մեզ
համար այդ մըրկիները և՛ լոյս են, և՛ խնդութիւն»:

Կոստակարղային պալքարը, որ Անգլիայում պայ-
թեց 80-ական թւականներին, սոցիալիզմի անուան
ու պրոլետարական պօէզիայի վերածնութիւնը ար-
տայուլումն էին երկրի վրայ շարժւող նշնաժամի:
Այդ նշնաժամը ծագեց, որովհետեւ համաշխարհային
շուկաներում Անգլիան զրկւել էր առաջնութիւնից:
Այդ սոցիալական նշնաժամից անգլիական բուր-
ժուազիան ելը էր փնտրում իմպերիալիզմի մէջ:
Իսկ իմպերիալիզմը, 19-րդ դարի վերջերին և 20-րդ
դարի սկզբներին ստեղծելով իմպերիալիստական պօ-
էզիան, Անգլիայում ժամանակաւորապէս խլացրեց
պրոլետարական պօէզիան:

*) Կողորդա — Հոռմէական լեզիոնների հարիւրակ, որ
աչքի էր ընկնում իր կարգապահութեամբ:

Ծան. Թարգմ.

II.

Անգլիայից չէտոյ կապիտալիստական զարգաց-
ման ուղին թեւակոխեց Պրաճսիտն: Այստեղ զեռ 40-
ական թւականներին բանւոր դասակարգը երկրի պատ-
մութեան մէջ խոշոր դեր կատարեց: Այդ առանձնա-
պէս շօշափելի կերպով երեւց 1848 թւի Փետրւա-
րեան Յեղափոխութեան օրերին: Երբ պարիզցիները —
մանր բուրժուազիան ու բանւորները — իրենց հաշիւը
վերջացրին Լիւդովիկոս-Փիլիպպոս թագաւորի հետ,
և հանրապետութիւն հռչակեցին, կազմւեց ժամա-
նակաւոր կառավարութիւն, որտեղ մտան նաեւ սո-
ցիալիստներ ու մի բանւոր: Շարժման մէջ նախա-
ձեռնողի դերը հետզհետէ անցնում էր պրոլետարի-
տային: Սոցիալիզմի կարմիր ուրուականից սարսա-
փահար՝ բուրժուազիան զօրքերը շարժեց բանւորու-
թեան դէմ և յուլիս ամսին նրա արիւնով ներկեց
Պարիզի փողոցները: Ինչպէս Փետրւարեան Յեղափո-
խութեան շրջանում զլիսաւոր դորժող անձը պրոլե-
տարիտան էր, նոյնպէս և Փետրւարեան Յեղափոխու-
թեան պօէզիան պրոլետարական բնոյթ է կրում: Յե-
ղափոխութեան երզիչներն իրենք բանւորներն էին:
Մի քանիսն էին նրանք — Դիւսսոն, Լերուա, Լեպաժ:
Սովորաբար նրանք հանգէս էին զալիս բանու-
րական պաղօններում, ուր իրենք էին երդում իրենց
երդերը, իսկ լանսետրոյները եռանդով ձայնակցում
էին նրանց: Այդ քնարերգութիւնը, որ սկզբում լի
էր կենսութախ յոյսերով, Յուլիսեան արիւնոտ օրե-

րից չետոյ սկսում է հնչել ցասումով, նղովքով—բուր-
ժուա-գահիճները հասցէին:

Այդ պօէս-բաներների մէջ առաջին տեղը գրա-
ւում է Պիեր Դիւպոնը:

Մետաքսագործի որդի էր նա: Սկզբներում պատ-
րաստւում էր հոգեւոր կոչման համար, բայց սեմինա-
րիայից հեռանալով՝ բանւոր դարձաւ: Նա իր մեծ
տաղանդի շնորհիւ շուտով դարձաւ Պարիզի պրովե-
տարիաւի սիրելին: Առանձին հռչակ ու ժողովրդա-
կանութիւն ստացաւ նրա մի երգը: Ոչ միայն բան-
ւորների, այլ և քաղաքացիների մէջ, «Նացի երգն»
էր այդ: Նրա ժողովրդականութեան մասին կարող է
վկայել թէկուզ հէնց հետեւեալ փաստը: 1850 թւին
Պարիզի թատրոններից մէկում խաղում էին մի պի-
էս, որի մէջ ցնցիչ դոյներով էր ներկայացրած իրլան-
դական ազարակագործ զիւղացիների կեանքը: Ներ-
կայացման միջոցին թատրոնի ամբողջ բաղմութիւնը
մի մարդու պէս լանկարծ երգեց «Նացի երգը»: Հե-
տեւեալ օրը պիէսան արգելեցին, բայց Դիւպոնի եր-
գը մաշեց և՛ ռէակցիայի սև օրերը և՛ իր քերթողին,
և այն մոռացւած չէ նոյն իսկ մեր օրերին: Ահա
նրանից մի փոքրիկ հատւած.

Երբ գետի եզերքին պարապ
Կանգնած է թւը ջաղացի,
Իշուկն—անհոգ զաշտերում—
Տիրոջ հետ չի գնում հացի,—
Գաղսգած գալլերի նման

Գաղցր ամեն մի տուն:

Օդը՝ լի բոցերով անհուն:

Մըրիկն է ամենուր վիտում:

Զայրոյթը քաղցած մարդկութեան,

Ձէք մարի, աիրաններ դուք.

Հուժկու ճիչն է այդ բնութեան.—

—Մեղ հաց... միշտ հաց անարցունք:

Դիւղերից բալլերով հսկայ

Գաղցն արդէն զիմում է քաղաք,

Սւինով դուք կալնե՞լ կուղէք...

Նրան ի՞նչ վառօդ ու գնդակ...

Նա նորից դէպ քաղաք կերթայ,

Կրմանի ամեն մի խրճիթ,

Աշտարակն ի վեր յաղթական

Կը պարզի դրօշակն իր սև:

Զայրոյթը քաղցած մարդկութեան

Ձէք մարի աիրաններ դուք.

Հուժկու ճիչն է այդ բնութեան.—

—Մեղ հաց... միշտ հաց անարցունք:

1848 թւի յեղափոխութեանը յաջորդող ռէ-
ակցիայի տարիներին, Նապօլէոն երրորդի աիրապե-
տութեան օրով Դիւպոնը միւս բոլոր սոցիալիստնե-
րի նման հալածանքի ենթարկւեց, և դատապարտւեց
եօթ տարւայ արսորի: Հայրենիք վերադառնալով՝ նա
մեկուսացաւ քաղաքական կեանքից և ծալրալեղ չքա-



ւորութեան ու քաղցի մէջ մեռաւ 1870 թւականին, Կոմմունայի հռչակումից քիչ առաջ:

1754 թւին Լոնդոնում ծագեց «Բանւորների միջազգային սակեղծագործութիւնը» կամ առաջին «Խնտերնացիոնալ»-ը, որի նպատակն էր — բոլոր երկրների կապիտալի դէմ կռւելու համար համախմբել համաշխարհային բանւորութիւնը: Խնտերնացիոնալը աշակեցեց ոչ միայն տարբեր երկրներում սկսւած տրեստեական գործադուլներին, այլ և աշակեցեց ճնշւած ժողովուրդներին իրլանդացիներ, լեհեր ու սարկացած դասակարգների լեզափոխական շարժման: Եռանդուն կերպով նա օգնեց 1861 թւին Պարիզում հիմնւած Կոմմունային: Նոր հռչակւած Կոմմունայի մէջ լեզափոխական կրակոտ երիտասարդութիւնը տեսնում էր սոցիալական յեղաշրջման չաղթանակը, որ — այդ սերնդի ներկայացուցիչներից մէկի ասելով — նրանք «այնքան երազում էին Նապոլէոն երրորդի կայսրութեան վերջին տարիները»: Հարկաւ, Կոմմունան հեռու էր սոցիալիզմից, և թէ՛ նրա ժողովրդականացած մանիֆեստի և թէ՛ ձեռք առած գործնական միջոցների մէջ որոշակի — սոցիալիստական ոչինչ չկար: Բայց և այնպէս ազնւականութիւնն ու բուրժուազիան, կատաղած Պարիզի կոմմունարների փառաւոր պաշտպանութիւնից, որ պաշարւած էր գերմանացիներով, երազելով որքան կարելի է շուտ ձեռնարկել իրենց հայրենակիցներին սոյորականին պէս հարստահարելուն, որոշեց վերջ տալ կոմմունային, և չաղթանակելով՝ գնդակահարեց 20000 կոմմունար-

ներ: «Ընդհանուր խորհրդի» կամ Խնտերնացիոնալի կենտրոնական Կոմիտէի յանձնարարութեամբ Մարքսը դրեց իր հռչակւոր բրօշիւը — «Բաղաքացիական պատերազմը Փրանսիայում», ուր ցասումի խօսքեր մեխելով ապստամբութեան դահիճների ճակատին՝ վերջում բացականչում է. «Բանւորների Պարիզը, Կոմմունայի Պարիզը կապրի յաւիտեան, որպէս նոր աշխարհի փառահեղ աւետարներ»:

1848 թւի Փետրւարեան Յեղափոխութեան պէս 1871 թւի Կոմմունան էլ սակեղծեց իր պօէզիան, որը շնչում է ոչ միայն լեզափոխական, այլ և սոցիալիստական ոգով: Նա գերազանցապէս մկրտւած էր պրոլետարական լեզափոխութեան կարմիր փայլով: Կոմմունիստ-պօէտների մէջ կային նաև ինտելլիգենտներ, ինչպէս՝ Կլեման, Ժուի, — քիչ չէին նաև Փրանսիայի բոլոր անկիւններում ջրւած բանւորները: Նրանք բոլորն էլ մոռացւած էն, բայց մոռացւած չէ մէկը, մի երգ: Այդ պօէտներից միայն մէկը սերունդների լիշողութեան մէջ վերապրեց և՛ 1871 թւի ապստամբութիւնը, և՛ իր անփական մահը:

Էժէն Պօտիէն էր այդ:

Նա հեղինակն է այն երգի, որ «Մարսելիէզի» հետ միասին միջազգային հիմն դարձաւ և կապրի հեղինակի հետ, քանի դեռ չեն վերացել աշխարհում հարստահարողները, քանի սերտ միութիւն կայ բոլոր երկրների պրոլետարիատի միջև: Նա քերթողն է այն երգի, որ իր մէջ է առել Կոմմունայի լեզափոխական ոգին Խնտերնացիոնալի միջազգային ձգտումների հետ:

Նա հեղինակն է այն երգի, որով փակւել են բանւոր-
ների միջազգային երկրորդ միութեան բոլոր համա-
գումարները և որը նորից ու նորից հնչել է պրոլետա-
րական պայքարի բարձրացման բոլոր մոմէնտներին:

Այդ երգը խորագրւած է «Ինտերնացիո-
նալ»:

Նա սկսւում է կոչով, ուղղւած բանւորներին,
որով նրանց ապստամբութեան է կանչում իրենց
հարստահարողների դէմ:

Ե՛ր, կանգնի՛ր, անէծքով դրոշմւած,
Սարուկի, բաղցածի մեծ աշխարհ:

Նա կոչ է անում՝ իր կամքին ու իշխանու-
թեանը ենթարկել կեանքը, հիմնադատակ անել բռնու-
թեան ու հարստահարութեան աշխարհը և նրա տեղ
կառուցել՝ ազատ աշխատանքի՝ պայծառ թագաւո-
րութիւնը:

Մենք մեր նոր, մեծ աշխարհն ստեղծենք,
Ով ոչինչ էր՝ կրկինի ամեն ինչ:

Կեանքը պատկանելու է նրան, ով չարչարում
է, և ո՛չ անգործ պարազիտներին:

Միայն մենք, բանւորներս աշխարհի
Գործող մեծ բանակի

Հողերին տիրելու ունինք մեծ իրաւունք:

Եւ վերջանում է այն հաւատով, որ կապիտա-
լիստական շահագործման և բուրժուական բռնու-
թեան հին աշխարհը տեղի կապ աղատութեան ու
հաւասարութեան դալիք թագաւորութեան առաջ,

որ յրւած մըրկից չեալ անամպ երկնքում պայծառ
շողերով արեգակը կրակոյ:

Փայլել հրովն իր շողերի:

Իսկ այս հիմնի իւրաքանչիւր տունը, որի ծա-
յերը հնչում են միլիոնաւոր շուրթերից Ֆրանսիա-
յում ու Ռուսաստանում, Իտալիայում ու Սկանդի-
նաւիայում, — իւրաքանչիւր տունը վերջանում է կրո-
կներգով, որն ընդգծում է, թէ բանւորների միջազ-
գային միութիւնն է ո՛չ միայն աշխատաւորութեան
ազատագրման, այլ և աշխարհի վերաշինման միակ
միջոցը:

«Ինտերնացիոնալի հետ կստեղծւի յեղը մարդ-
կային»:

Եւ այս ոտանաւորը, թերեւ երբէք այնքան խո-
րունկ իմաստ չի ունեցել, որքան մեր օրերին, երբ մի-
այն աշխատաւորների միջազգային կապակցութեան
վերածնութեամբ կարելի է վերջ տալ և՛ պատերազ-
մին, և՛ բոլոր երկրներում տմրասնդել դեմակրատի-
այի տիրապետութիւնը:

Կոմմունայի տապալումը ծանր հարւած հաս-
ցրեց բանւորական շարժման Ֆրանսիայում և դրա
հետ միասին ջլատեց Ինտերնացիոնալի ուժերը: Եր-
կրորդ անգամ ջախջախւելով՝ Ֆրանսիական պրոլե-
տարիատը խորասուզեց վիստութեան և անգործու-
թեան մէջ:

Բայց ոչ երկար: Եօթանասնական թւական-
ների վերջին բանւորական չեղափոխութիւնը նոր
թափ առաւ: Սոցիալական հին ուսմունքներն, իրաւ,

կորցրել էին իրենց թարմութիւնը: Նրանց փոխարինեց նորը, որ շատ բան էր խոստանում: Ժիւլ Գեյ և Պօլ Լաֆարգ հիմնեցին Փրանսիայի բանւորական կուսակցութիւնը: Իրենց դրօշակին նրանք դրեցին «Կոլլեկտիվիզմ» — բանւորների նւաճումն արդիւնաւորութեան միջոցների, օրօնք ազատագրման միջոցներ են, որոնք անհրաժեշտ ուղիներ են դէպի սոցիալիզմը:

1872 թւին Մարսելում համագումար հաւաքւեց, ուր ձայների մեծամասնութեամբ Մարքսի ուսմունքը յաղթանակեց մինչև այդ բանւորական շրջաններում դեռ իշխող հոսանքներին: Այստեղ Կոլլեկտիվիզմի ջերմ պաշտպանի դերում հանդէս եկաւ Ժան Լոմբարդը, որը յետոյ հռչակեց իր պատմական վէպերով: Իսկ 1882 թւին Պարիզի բանւորական համագումարում հիմք դրեց երկրորդ Ինտերնացիոնալին: Համագումարը որոշեց ամենուրեք տօնել մայիսի մէկը, որպէս միջազգային պրոլետարիատի միացման միջոցներից մէկը, իսկ հետեւեալ տարին ինչպէս Եւրոպայի, նոյնպէս Ամերիկայի բանւորները տօնեցին պրոլետարական տօնը: Այդ տօնի առիթով Պարիզում լոյս տեսաւ մայիսի մէկին նւիրւած ոտանաւորների ժողովածուն, որի մէջ ոտանաւորներ ունի նաև բանւորական կուսակցութեան հիմնադիր Ժ. Գեյը:

Այնուհետև սոցիալիստական շարժումը Փրանսիայում անեց իր ամբողջ լայնութեամբ ու խորութեամբ: Փրանսիայում բանւոր դատակարգը քաղաքական առաջնակարգ ոյժ դարձաւ: Ինտելլիգենտ-

պօէտների հայեացքի առջև տիրապար կանգնեց նոր աշխարհը ի մրդիոտ բռնկումներով ու մարտական եռանդով, նոր աշխարհ—տոգորւած գալիք օրերի շնչով: Եւ պօէտներն իրար ետևից մօտեցան նրան, տւին նրան իրենց օղևորութիւնը, իրենց ցնորքներն ու իրենց բանաստեղծութիւնները:

Երրորդ հանրապետութեան շուրջի տակ, բանւորական անող շարժման մթնոլորտում Փրանսիայում ծայր առաւ նոր, սոցիալական պօէզիան:

Առաջին անգամ նրա ծրագիրը զԺամ էր դեռ Փրանս-պրուսական պատերազմի և Կոմմունայի ապստամբութեան տարին—բանաստեղծութիւնների այն ժողովածուի մէջ, որ պատկանում է է. Մանիէլի գրչին: Նրա նախահայրը համարում է հէնց Մանիէլին ինքը: «Պօէզիայի առաջ նոր նպատակ է դրւած,—ասում է նա իր բանաստեղծութիւնների յառաջաբանում:—Նա պարտաւոր է աւելի և աւելի ժամանակակից դառնալ, նա պէտք է արտայայտի դէմակրատիկ հասարակութեան իդէալները, զգացմունքներն ու տառապանքները: Կարիք, ապիպութիւն, ծանրը աշխատանք, կեանք ի՞նչ ստորացմամբ, անլուր հերոսութիւն, անհաւասարութիւն, ամեն տեսակ վիշտ ու ամեն տեսակի յուսահատութիւն,—անո աչդ նոր պօէզիայի նիւթը, հարուստ պայծառ պատկերներով և ցնցող զգացմունքներով, լոյսի ու սոււերի խիստ հակադրութեամբ և զաժան խրատներով»: Այս խօսքերը դրւած էին դեռ 1871 թւին, իսկ բանի անում էր բանւորական շարժումը, նոյրան բազմանում էին

դեմոկրատական պօէզիայի այդ մանիֆեստները: «Բանաստեղծը,—ասել է նրա մտորակներէից մէկը,— ժողովրդի ներկայացուցիչն է զեղեցկի թագաւորութեան մէջ: Նրա սլարաքն է իր երգերով բարձրացնել իր եղբայրների հոգին: Խորին զիտակցումն իր սոցիալական պարտականութեան,—ահա թէ՛ անձնական, թէ՛, միաժամանակ, սոցիալական պօէզիայի հիմքը»: «Պօէզիան,—բացականչում էր այդ հոսանքի մի ուրիշ ներկայացուցիչ,— պէտք է արտացոլի մեր ժամանակի իդէալներն ու ծրարումները: Ժողովուրդը ծարաւի է արդարութեան, մտաւոր զարգացման ու զիտութեան... Դժւար չէ իրականացնել այդ իդէալը, և նա զեղեցիկ է այն աստիճան, որ կարող է հմայել նաև պօէտին»:

Ժամանակի ընթացքում այդ մանիֆեստներն աւելի շատանալով՝ վկայում են, որ բարձրացող բանւոր դասակարգը իր դիրքերն ամրապնդեց ոչ միայն քաղաքական կեանքում, այլ և հոգեկան կուլտուրայի թագաւորութեան մէջ: Նրես դարձնելով տիրող բուրժուազիայից, կտրւելով բուրժուական գրականութեան աւանդներից ու պահանջներից՝ պօէտների մի ամբողջ շարան հրապուրանքով ու անձնուրացութեամբ ձեռնարկեց պրոլետարական պօէզիայի պայծառ ապարանքի կառուցման: Միայն այդ պօէտներին թւելը մեծ ժամանակ կը խլէր: Նրանք բխւորաւոր են:

Բուրժուական հասարակութիւնն ու քննադատութիւնը շանասիրութեամբ լռութիւն պահպանեց

բուրժուական աշխարհի դէմ պօէտների բարձրացրած սպասամբութեան մասին և ձեւերեց, թէ միայն կապիտալին ծախւած խօսքի նկարիչների պաշտօնական պօէզիա գոյութիւն ունի:

Բայց աւելի բարձր ու աւելի լաղթական էին հնչում ժողովրդի երգիչների ձայները: Տիրող կարգերի փառաբանութեան ու մեծարանքի մէջ նրանք նետում էին իրենց կիրքն ու դարովթը, անհաշտ թշնամութեան հնչիւններն ու անխուսափելի ապստամբութեան ապառնալիքը: Նրանք դրում էին ոչ թէ զրէով, այլ մտրակով, երգում էին ոչ կեանքի տօնը, այլ դասակարգների պայքարը: Խնդութեան ու երջանկութեան երգերը նրանք մէկզի թողեցին—մինչև սոցիալական յեղափոխութեան լաղթանակը: Նրանք ամենքը պատրաստ էին կրկնելու իրենց զրջակից-զաւափարակից ընկերներից ամենախոշորի, տաղանդաւոր պօէտ Կլովիս Գիւդի բռանաւորները. «Միայն այն օրը, երբ ժողովուրդն ամենուրեք կարող ձեռքերով կկառուցի ազատ աշխատանքի գործարանը, երբ սուրբ արդարութիւնն ու յաւերժական իրաւունքը աստղերից պսակ կը հիւսեն նրա ճակատի համար, միայն այդ ժամանակ իմ Վրիժառու Մուսան, որ նման է բանւոր աղջկայ, կրպանուենի փայլուն զգեստով, իր պղնձէ մտրակը կը փշրի դուրս ընկած ձնկների վրայ և արծակ մաղբերով, փայլուն հայեացքով ու պարզ ճակատով Կարմանիօլա*» կպարի քաղաքացիների

*) ԿԱՐՄԱՆԻՈՒԼԱ—Յեղափոխական դեմոկրատիայի (Յակոբեանների և սանկիւլոտների) պարերգ 18-րդ դարում:

հետ այն երկնքի տակ, ուր սաւառնում են նոյնպիսի աղատ [Թուշուններ]»:

Տնարաւորութիւն չկայ կանգ առնելու ոչ միայն այն բոլոր պօէաների վրայ, որոնք իրենց «Ժողովրդի ներկայացուցիչ են համարել զեղեցկի [Թագաւորութեան մէջ]» և համարում էլ են, այլ և անհնարին է խօսել—[Թէկուզ այն բանաստեղծների մասին, որոնց լաւագոյն ոտանաւորները մտել են հատորնտիրի (Անտոյոգիա) մէջ, որ լոյս տեսաւ պատերազմից մի քանի տարի առաջ: Այդ ոտանաւորների մէջ պատկերացրած է Փիլիքական ամեն տեսակի վիճակը.—հողադործ-բատրակներ ու հանքահաններ, բուլկափանառ ու բեռնակիր, բանւորներ ու բանւորուհիներ,—ահա այդ պօէզիայի հերոսները: Բանւորական մասսան, որ դեռ քիչ առաջ (Կոմմունայի ցրումից յետոյ) չախնջալաւած ու պարտաւած, ճնշւած ու անդիտակից էր, այժմ նորից սթափւում է: Այսպէս, տաղանդաւոր Մորիս Մազը իր ոտանաւորներից մէկում բացականչում է. «Մենք այլ ևս հաւատ չունինք, որը մեզ հաշտեցնէր մեր սարկական վիճակի հետ: Մեզ պէտք է անդրշիրմեան երջանկութիւնը, որի մասին խօսում են անէրտէրները: Մենք կամենում ենք աշխարհային բազմ, մեր աշխատանքով ու համբերութեամբ անեցրած հաց: Մենք մեզ համար տեղ ենք պահանջում կեանքի խնշոյթում: Մենք կամենում ենք մեր բաժին երջանկութիւնն ու մեր բաժին սէրը»: Ի՞նչ սեղմած բռնուցքները վիթխարի քաղաքին մեկնելով՝ նա ասում է. «Քո պատերը շին-

ւած են մեր ձեռքերով, քո երակների մէջ հոսում է մեր արիւնը. քո տանարներից կաթում է մեր արիւնը»:—Կրգայ ժամն, և ստրուկները կապստամբեն: Գերեզման կիջնի բռնութեան ու ճնշումի քաղաքը—դաւաւոր անարդարութեան այդ հին աշխարհը: Իսկ աւերակներից կը ծաղկի նոր կեանք—ազատ ու պայծառ: «Գարնան մի առաւօտ անցնալի փլատակներից կը բսնեն մատղաշ ծառերի շիւղերը և, իրենց մանուկներին օրօրելով, մայրերը կը տեսնեն թէ ինչպէ՞ս նրանց աչիկների մէջ արտացոլում են դալիք քաղաքի պատերն ու աշտարակները»:

Եւ Փրանսիայում սոցիալիստական շարժման անրապնդման հետ միաժամանակ—այս նոր դեմոկրատիկ պօէզիան [Թափանցում էր սոցիալիզմի իրականացան անխուսափելիութեան հաւատքով: Երբ Պարիզում, բանւորական [Թաղերից մէկում «Ժողովրդական ապարանք» էին բացում, հանդիսականների առաջ բանաստեղծ Գրեգը կարգաց իր մի ոտանաւորը, կոչ անելով նրանց՝ ամբողջ աշխարհն ու համայն տիեզերքը դարձնել աշխատանքի, հաւասարութեան ու խաղաղութեան նոյնպիսի ամենապարփակ ապարանք: «Կառուցենք այն ատելութեան, արհամարող սիրոյ հիմունքներով: Կաշխատենք և հարկ եղած դէպքում՝ կըմեռնենք, քանի դեռ ամբողջ երկիրը չի դարձել այսպիսի ժողովրդական ապարանք, երկիրը, որ յաւէտ ազատ է կապոյտ երկնակամարի տակ, այդ երկրի վրայ եղբոր պէս կըգրկախառնեն բոլոր նրանք, ովքեր կռւում էին իրար հետ մօտ

անցեալում: Մենք աշխարհը կրդարձնենք ժողովրդական այնպիսի ապարանք, ուր տեղ չեն ունենայ ո՛չ կեղծ աստուածները, ո՛չ աղքատութիւնը և ո՛չ պատերազմը:

Մինչ դեռ պրոլետարական պօէզիայի ապարանք կառուցող բանաստեղծների մեծ մասը ինտելիգենտներ էին, վերջին տարիները փրատիայում աւելի շանախ հանդէս են դալիս բանւոր-պօէտներ: Սոցիալական պօէզիան բառիս կատարեալ իմաստով դարձաւ պրոլետարական պօէզիա: Սկսեցին տալադրութեան համար պատրաստել այնպիսի բանաստեղծութիւնների ժողովածուներ, որոնց հեղինակները — բանւորներ էին:

Եւ յանկարծ այդ շատ բան խոստացող շաւիտումը կանգ առաւ:

Սկսեց պատերազմը:

Փրանսիայում («սոցիալական խաղաղութիւն») հաստատուեց:

Բանւոր դասակարգը իր նպատակները ենթարկեց («ազգի») նպատակներին: Սոցիալական պօէզիան փոխարինեց ուրախ-հալընափրական, պատուերով զրւած պօէզիայով:

Սակայն անցել է արդէն նաեւ այդ շրջանը: Մեր աչքերի առաջ, ոչ միայն պատերազմի, այլ և ռուսական յեղափոխութեան ազդեցութեան տակ — նորից փրանսիայում վերածնունդ է պայքարը — մաքրելով պրոլետարական զաւիթ պօէզիայի ուղին:

III.

Գերմանիայում պրոլետարական պօէզիայի ծագումը համարւում է 1848 թւի բուրժուական յեղափոխութեան ժամանակաշրջանը:

Մինչև այդ Գերմանիայում տիրում էր միապետութիւն:

Հարաւում սկսւած յեղափոխութիւնը մարտամտին իր ալիքներով ողողեց նաեւ Բերլինը և, ինչպէս մի ժամանակ Պարիզի փողոցները, նոյնպէս և այժմ Բերլինի փողոցները լցւեցին բարբիկադներով: Ինչպէս Փետրւարեան Յեղափոխութեան օրերին Պարիզում, նոյնպէս և այժմ, մարտ ամսին Բերլինում զլխաւոր մարտիկներ հանդիսացան բանւորները, առանձնապէս մեքենագործական արհեստանոցի բանւորները, և սպանւածներ էլ եղան միայն նրանցից: Հետեւեալ օրը, յեղափոխութեան յաղթանակից յետոյ արքայական դղեակին մօտեցաւ մարդկային մի հսկայ բազմութիւն, առջև ից — սպանւած բանւորների դիակներ, և պահանջեց թաղաւորին թաղաւորը պատշգամբ դուրս եկաւ՝ դունատ ու շփոթւած: «Դէն շարտիր զլխարկը» — կոչւում էին ամեն կողմից: Նախկին ինքնակալը խոնարհ ողջոյն տուեց աղատութեան համար ընկածներին:

Յեղափոխութեան վեհագոյն աօնախմբութիւնն էր այդ:

Ժողովրդական շարժումից երկիւղած բուրժուապիան անուրդի դուրս եկաւ հին իշխանութեան ու երկրապործ դասակարգի հետ, և այդ բանակցու-

թիւներէի, այդ փորձողի համաձայնութեան, հետեւանքը եղաւ այն ինքնատիպ սահմանադրութիւնը յօգուտ ազնւականութեան, բուրժուադիայի ու թագաւորի, առանց պատասխանատու մինիստրութեան, —որը բարեյաջող կերպով իր գոյութիւնը քաջքշեց մինչև պաաերազմ և ներկայումս ապրում է իր վերջին օրերը:

Մարտի յեղափոխութիւնը և նրա զլխաւոր հետոս—բանւոր դասակարգը դռան իրենց երգիչը, յանձինս Փրէյլիզդրատի: Փրէյլիզդրատը, որ առաջ ռոմանտիկ էր և հարստանում էր, որ ինքը բարձր է ամեն տեսակի կուսակցութիւնից, որ ինքը «Մաքուր Գեղարեւտի» քուրմն է,—ամբողջ հողով անցաւ շարժման մէջ և մտաւ ծայրայեղ կուսակցութեան, Կոմմունիստների կամ սոցիալ-դեմոկրատների կուսակցութեան շարքերը, որի համար Մարքսը ու Էնգելսը գրեցին իրենց «Կոմմունիստական Մանիֆեստը»:

Յեղափոխական նոր ոգով զրած իր առաջին ռոտանաւորների մէջ պօէար բերկրանքով ողջունեց 1848 թւի «Փառահեղ Փետրւարը», յուսով—որը չիրաւի արդարացաւ,—որ ապստամբ Պարիզի ետեից կելնի Իտալիան, կելնի Հունգարիան, և որ մի անգամ արդէն շարժւելով այլ ևս չի կանգնի լաւան, այլ կհասնի մինչև Բերլին:

Մարքսի ու Էնգելսի պէս Փրէյլիզդրատն էլ համոզւած էր, որ եթէ յեղափոխութիւն բռնկի Գերմանիայում, բանւորները կըտանեն այն իրենց ու-

սերին և որ պրոլետարիատը կոչւած է ո՛չ միայն պետութիւնը նորէն վերաշինելու, այլ և աշխարհը նորոգելու նոր ուսմունքով—սոցիալիզմով:

Եւ պօէան իր այդ համոզմունքն արտայատել է «Վարից վեր» ռոտանաւորի մէջ:

Հռէնոսի վրայ լողում է մի նաւ. տախտակամածի վրայ թագաւորն է, իսկ մեքենաների բաժանմունքում, սօթի ու խաւարի մէջ կանգնած է երիտասարդ բանւոր-կաթսայալարը: Մանր միտք է անուժ նա: Նրա ձեռքին է ո՛չ միայն շողեմաւր, այլ և սմբողջ պետութիւնը, ո՛չ միայն թագաւորի բաղլը, այլ և համայն աշխարհի վիճակը:

Արքայ՝

Իմ սարուկն է հրաբուլիսը յուզումնալից,

Որի զլխին զրւած է պերն գահոյքը քո:

Լոկ մի հարւած... և կը ցնդի շէնքը հիմքից,

Որին անհաս զազաթ էիր այնքան տարի:

Դու ցնդեցիր այս օդի մէջ, սև խաւարից դերեզմանի

Լոյս է գալիս ընչապուրկը համայն երկրի,

Պետութիւն է կռում նորից:

Եւ հնչում են ճիւղերն ուրախ ու յաղթական.

Այս վայրկեանին ես Փրկիչն եմ ողջ մարդկութեան

Եւ ուսուցիչ նորոգ կեանքի—վառ, գեղեցիկ,

Ինչպէս սուրբն Քրիստափոր,—

Նա եմ հիմա, ով աղատւած ոգին առողջ—

թիւների, այդ փորձողի համաձայնութեան, հետեւանքը եղաւ այն ինքնատիպ սահմանադրութիւնը յօգուտ ազնւականութեան, բուրժուադիայի ու թագաւորի, առանց պատասխանատու միջնորդութեան, —որը բարեյաջող կերպով իր գոյութիւնը քաջքէջ մինչև պատերազմ և ներկայումս ապրում է իր վերջին օրերը:

Մարտի յեղափոխութիւնը և նրա զլխաւոր հերոս—բանւոր դասակարգը գտան իրենց երգիչը, յանձինս Փրէյլիգզրատի: Փրէյլիգզրատը, որ առաջ ռոմանտիկ էր և հարստանում էր, որ ինքը բարձր է ամեն տեսակի կուսակցութիւնից, որ ինքը «Մաքուր Գեղարեւստի» քուրմն է,—ամբողջ հողով անցաւ շարժման մէջ և մտաւ ծայրայեղ կուսակցութեան, Կոմմունիստների կամ սոցիալ-դեմոկրատների կուսակցութեան շարքերը, որի համար Մարքսը ու Էնգելսը գրեցին իրենց «Կոմմունիստական Մանիֆեստը»:

Յեղափոխական նոր ոգով զրամ իր առաջին ոտանաւորների մէջ պօէար բերկրանքով ողջունեց 1848 թւի «Փառահեղ Փետրւարը», յուսով,—որը յիրաւի արդարացաւ,—որ ապստամբ Պարիզի ետեւից կելնի Իտալիան, կելնի Հունգարիան, և որ մի անգամ արդէն շարժւելով այլ ևս չի կանգնի լաւան, այլ կհասնի մինչև Բերլին:

Մարքսի ու Էնգելսի պէս Փրէյլիգզրատն էլ համոզւած էր, որ եթէ յեղափոխութիւն բռնկի Գերմանիայում, բանւորները կըտանեն այն իրենց ու-

սերին և որ պրոլետարիատը կուտած է ո՛չ միայն պետութիւնը նորէն վերաշինելու, այլ և աշխարհը նորոգելու նոր ուսմունքով—սոցիալիզմով:

Եւ պօէան իր այդ համոզմունքն արտայատել է «Վարից վեր» ոտանաւորի մէջ:

Հռէնոսի վրայ լողում է մի նաւ. տախտակամածի վրայ թաղաւորն է, իսկ մեքենաների բաժանմունքում, սօթի ու խաւարի մէջ կանգնած է երիտասարդ բանւոր-կաթսայալարը: Մանր միտք է անուժ նա: Նրա ձեռքին է ո՛չ միայն շողենաւը, այլ և ամբողջ պետութիւնը, ո՛չ միայն թաղաւորի բաղլը, այլ և համայն աշխարհի վիճակը:

Արքայ՝

Իմ սարուկն է հրաբուլիւր յուղումնայից,

Որի զլխին դրած է պերն գահոյքը քո:

Լոկ մի հարւած... և կը ցնդի շէնքը հիմքից,

Որին անհաս զազաթ էիր աչնբան տարի:

Դու ցնդեցիր այս օդի մէջ, սև խաւարից զերեզմանի

Լոյս է գալիս ընչաղուրկը համայն երկրի,

Պետութիւն է կռում նորից:

Եւ հնչում են ճիչերն ուրախ ու յաղթական.

Այս վալրկեանին էս Փրկիչն էմ ողջ մարդկութեան

Եւ ուսուցիչ նորոգ կեանքի—վառ, գեղեցիկ,

Ինչպէս սուրբն Գրիստափոր,—

Նա էմ հիմա, ով աղատւած ոգին առոյգ—

Մրրկալից այս աշխարհից ամենում է նոր կեանքի խնջուք:

Սակայն ապարդիւն եղաւ բանւորների յաղթանակը: Բուրժուազիան դաւաճանեց ազատութեան գործին: Յուզւած հին կարգերի ուժերի գործադրած այդ խախտումակ կեղծիքից՝ պօէտը բուրժուազիային ուղղեց իր ցասկոտ ոտանաւորը, խորադրելով այն. «Մեռածները-կենդանիներին»:

Բարրիկադներում ընկած բանւորները ցուրտ հողի տակ պառկած չիշում են յեղափոխութեան յաղթանակի ոչ հեռաւոր օրերը, չիշում են՝ ինչպէս թագաւորը պատաշղամբ դուրս գալով՝ իրենց առաջ բացեց իր գլուխը: Եւ ի՞նչ: Ընդամենն անցել է երեք ամիս, և

«Ինչ ձեռք բերինք մենք մեր յաղթ ձեռքերով, Մենք իսկ այդ ողջին դաւաճանեցինք»:

Եւ այնուամենայնիւ նահատակները չեն կորցնում իրենց յոյսը: Ինչպէ՞ս կարող է պատահել, որ կենդանի մնացածների մէջ մարի քաղաքացիական հպարտութեան հուրը: Ինչպէ՞ս կարող է պատահել, մարի նրանց զայրոյթը. ոչ, նա միայն թաղնւել ու սպասում է նորից հնչելու համար: Նրա բոցից կը վերածնւի նոր յեղափոխութիւնը:

Զայրոյթը կը կանչի նրան: Այժմ նա սպասում է լրի:

Բաց կը գայ ժամը,—

Եւ նա կկանգնի խրոխտ, գեղեցիկ,

Կը պարզի կռոււմ գրօշը կարմիր,

Ու ձեռքին բռնած գրօշը կարմիր՝
Նա կը սլանայ շարքերի առաջ:
Բոցը կը լափի ջահն արքայական,
Իսկ հողին ազատ՝ ամենքի համար
Կը ստեղծի նոր կեանք ազատութեան մէջ:

1848 թւի յեղափոխութիւնը նշւած էր:

Կառավարութիւնը ձեռնարկեց հիմքում ոչնչացնելու նրա բոլոր արմատները: Հալածանքի ենթարկւեցին առանձնապէս ծայրայեղները, փակեց «Հռենոսեան Թերթը», որ հրատարակում էր Մարքսի մօտ աշխատակցութեամբ: Փրէյլիզգրաւար մի յուզիչ, առնական ոտանաւոր նւիրեց այդ թերթին, այդ յանդուգն «խառնակչին», որ մարտի գաշտում ընկաւ հպարտ բացականչութեամբ.

«Կեցցէ՛ յեղափոխութիւնը»:

Մարքսի և Էնգելսի հետ միասին Փրէյլիզգրաւար էլ՝ փախաւ Լօնդօն, և այստեղ, ուր Մարքսը իր էմիգրանտական կարիւնէտում ծրագրում էր իր «Կապիտալ» աշխատութիւնը, պօէտը հիմներ ձօնեց բոլոր նրանց, ովքեր կոչւած են տապալելու կապիտալի տիրապետութիւնն ու երկրի վրայ ստեղծելու ազատ աշխատանքի պայծառ թագաւորութիւն:

Ու թէև 1848 թւի յեղափոխութիւնը ամենուրեք տապալւեց, ինչպէս Մարքսը, Նոյնպէս և Փրէյլիզգրաւար չգաղարեցին հաւատալ նրա վերջնական յաղթանակին:

Աղատութեան ու հաւատարութեան նկատմամբ իր ունեցած այդ հաւատը պօէտն արտայայտել է «Յեղափոխութիւն» ոտանավորի մէջ:

Թող, թէ նրան զնդակահարել են բաղաժների փողոցներում, թող թէ նրան աքսոր են ուղարկել կամ փակել բանտերում, միևնոյն է, նա չի մեռել. նա միայն գնացել է:

Կը գայ ժամը, և աշխարհի վրայ նա նորից կը ծածանի իր կարմիր դրօշը:

Եւ միթէ՞ կարելի է սպանել այն, ինչի համար «ապաստարան է պատրաստուած ամեն համարձակ մտածող զլիսի մէջ, իւրաքանչիւր անկեղծ զգացող սրտում, իւրաքանչիւր խրճիթում, ուր հառաչանք է հնչում, ամեն արհեստանոցում, ուր լսում է մուրնի հարւածը»: Մի՞թէ կարելի է սպանել այն, ինչ «մարդկային շնչառութիւնն է», «որ աղատութեան է ծրգտում սարկացման ու խեղճութեան խաւարից»:

Կը գայ ժամը և նորից իր դրօշը բարձրացնելով աւեր պոպոտաների, խորտակւած գահերի վրայ՝ նա տիեզերքին կողբարարի իր չաղթական նիչով:

«Ես կայի՛, ես կամ, ես յաւէտ կլինեմ»:

Չնայած նրան, որ 1848 թ. չեղափոխութիւնով գերմանական բուրժուազիան կատարեալ չափողութիւն չունեցաւ կեանքի հին միապետական և ազնւա՛ն կարգերի հանդէպ, բայց և այնպէս երկիրն արդ ու անշեղ ընթանում էր կապիտալիզմի զարդացման ուղիով, իր ճանապարհին սրբում էր մինչև այդ իշխող արհեստային (մանր բուրժուական) կեն-

ցադը: Իսկ արդիւնաբերութեան հետ աճում ու աճրապնդւում էր նաև բանւորական շարժումը: Մարքսի ուսմունքն ու Լասսալի դործունէութիւնն ի մի ծուլեցին պրոլետարիատի շարքերը: 1875 թ. ին Գոտի համագումարում Մարքսի և Լասսալի հետևողները միացան միակ սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան մէջ: Երկիւղած պրոլետարական առաջնորդում նոր մարտիկի երևան գալուց՝ երեք տարի յետոյ Բիսմարկը հրատարակեց նշանաւոր «Օրէնքը սոցիալիստների մասին», որը ժամանակաւորապէս ցրեց սոցիալ-դեմոկրատիան, նրան ստիպելով անցնել անլեզալ դրութեան: Սակայն ապարդիւն եղաւ այդ քայլը: Փորձութիւնների մէջ պողպատ բանւորական կուսակցութիւնը հալածանքների միջից ծառացաւ աւելի հզոր ու բազմանդամ: 80-ական թւականներին ամբողջ Գերմանիան սոցիալիզմի դրօշի տակ էր: Նոյն իսկ երիտասարդ կայսր Վիլհելմ երկրորդը շտապեց մտնել կարմիր դրօշի տակ: 1890 թւականին նա հրատարակեց իր յայտնի օրէնքները, որով կառավարութիւնը ձեռնարկումներին պարտաւորեցնում է բարելաւել բանւորների դրութիւնը և ամեն կերպ հոգալ նրանց հոգեկան բարձրացման մասին:

Եթէ այդ տարիները նոյն իսկ իշխանութիւնն ընդառաջ զնաց պրոլետարիատին, աւելի շուտ և աւելի բնականաբար այդ պիտի անէր ինտելլիգենցիան, այդ միջանկեալ, ծայրաստիճան ապաւորւող ու զգայուն խաւը (թէև վերին աստիճանի անկայուն): Սկսեց իսկական «շարժում գէպի ժողովուր-

դր»։ Սպաները հանում էին իրենց տարազը, քահանաները՝ փառաշան, ուսանողները թողնում էին խեղդիչ առեղիտօրիտն, և ամենքն էլ դնում էին այնտեղ, վարը, ուր հրամայաբար կանչում էր նրանց պատմութեան ծայնն ու խղճի ծայնը։ Այդ շրջանի գրական արտադրութիւնների մէջ փայլում են ինտելիգենտ կերպարանքներ, որոնք, իրենց կապերը կարելով ազնւական կամ բուրժուական միջավայրի հետ, գնում էին ծառայելու բանւոր դասակարգին։ Իսկ զրակաւութիւնը կեանքի հայելին է։ Ինչպէս գերմանական կեանքը, նոյնպէս և գերմանական զրակաւութիւնը անցեալ դարի վերջերին սոցիալիզմի դրօշի տակ էին։ Անհամար են այն բոլոր ստեղծագործութիւնները, որոնք այս կամ այն երանդով պատկերացնում են սոցիալական հարցեր, աշխատաւոր մասսաների կացութիւնը, աշխատանքի ու կապիտալի պայքարը։ Դարի ամենախոշոր պօէտ Նաուպոմանը ստեղծում է իր «Չուլհակներ»՝ գրաման, քառամանական թւականների Սիլեզեան չուլհակ արհեստաւորների քաղցի ու տանջանքների պատկերը, պատկեր, որ աւարտւում է նրանց ապստամբութեամբ, որը, սակայն, ճնշում են գինւորական ուժով։

Այս պայմաններում, զարմանալի չէ, որ այսպիսի ժամանակաշրջանի պօէզիան իր շատ խոշոր ստեղծագործութիւններով գերադանցապէս ներշնչւած է սոցիալական, յեղափոխական և սոցիալիստական ոգով։ Կ. Գէկկէլի, Մ. Ֆ. Շտերնի, Դէմելի, Բ. Վիլլէի և ուրիշ, աւելի աննշան քնարերգուների ոտա-

նաւորները ասես թէ այն մարտական մեղեդիներն էին, որ զուգընթաց ընթանում էին բանւորական շարժման յաղթական երթի հետ, որն արդէն հեռու էր շարաւել «օրէնքը սոցիալիստների մօտին» և նւաճել էր գերմանական Ռայխստագը։

Ներկայ դարի սկզբներին գրական սոցիալիզմը կամ զրակաւագէտների սոցիալիզմը, ճշմարիտ է, դէպի աճկում գիմեց։ Նորակնունք «սոցիալիստներից» շատերը վերադարձան բուրժուական շինութեան յարկի տակ, որ թողել էին ժամանակաւ որսալէս։

Բայց զրա փոխարէն բուրժուական ինտելիգենցիայի սոցիալիստ-պօէտներին փոխարինելու եկան աշխատաւոր պօէտները, պրոլետարիատի այդ իսկական զաւակները։ Նրանցից մի քանիսին նոյն իսկ յաջողեց ուշադրաւ տեղ գրաւել պաշտօնական զրակաւութեան պալատում, պատւաւոր տեղ գրաւել այն պօէտների շարքում, որոնց մօտին «խօսում են»։ Այդ քչերի թւին է պատկանում, օրինակ, բանւորական շրջանից ելած պօէտ Կրիլլէն, պրոլետարական բաղմաթիւ ոտանաւորների այդ հեղինակը, որը, ի միջի այլոց, արձագանգել է նաև մեր առաջին յեղափոխութեանը։

Այդպիսի բանւոր-պօէտների շարքում, որոնք յայտնի են հասարակութեանը և որոնց ընդունել է նոյն իսկ քննադատութիւնը, վերջին տարիներս Գերմանիայում քիչ չեն երևան եկել նաև այնպիսիները, որոնք շարունակելով մնալ պրոլետարներ՝ ստեղծագործում են յատկապէս իրենց համար, առանց այն

տպադրւած տեսնելու ցանկութեան, և եթէ մի սոցիալիստի գլխում միտք չծագէր հաւաքել այդ բոլոր ոտանաւորներն ու լոյս բնծայել, այն ժամանակ նրանք յաւիտեան այդպէս մոռացւած կը մնային:

Այդ բանւոր-պօէտները, որոնք երբէք զրական փառք չեն երազել, պարապում են ամեն տեսակի պրօֆէսիայով. կան ածխահաններ, գրաշարներ, ջուր-հակներ, դարբիններ, հացթուխներ, բեռնակիրներ, կաթսափարներ և բատրակներ: Կան նաև մի քանի բանւորուհիներ:

Նրանց մեծ մասը հասակն առած, բնտանիքաւոր և նոյն իսկ շատ երեխատէր մարդիկ են, որոնք չնչին աշխատաւարձ են ստանում:

Ամենախիսկական բանւորների ստեղծած այդ երգերի բնաբան (էպիգրաֆ) կարող էին ծառայել նրանցից մէկի խօսքերը. «Թող ես ստրկական աշխատանքի ճանկերում լինեմ, քայց չար բախտը չի բնկնի իմ հոգին, որ ճախրում է դէպի արևի լոյսը»:

Այս ոտանաւորների մէջ, որ հրատարակւած են պատերազմից երկու տարի առաջ, հնչում են հոգուրբոյր լարերը, հնչում են շատ բողբոսեղանի մոտիվներ,—ոչ մի բան, ինչ մարդկային է, օտար չէ պրօլետար պէօսին: Միայն մի զգացմունք անհասկանալի ու անմատչելի է նրան—բուրժուազիայի ուղմական հայրենասիրութիւնը: Այդ ոտանաւորներից երկուսը վերաբերում են պատերազմին և երկուսն էլ պատերազմի նկատմամբ բացասական վերաբերում են արտայայտում: Գրաւելօտտէի մօտ (ուր 1870 թւին

գերմանացիները յաղթանակ են տարել) այցելելով հակառակմարտի դաշար, այդ պօէտներից մէկը (արհեստով կաղապարագործ) երևակայում է, թէ ինչպէս հողի միջից բարձրանում են Փրանսիական և գերմանական սպանւած զինւորները և նրանց արնաքամ շուրթերն ասես խօսում են եղբայրասպան պատերազմների անմտութեան մասին. իսկ միւս պօէտը (ածխահան) բուրժուական պօէտներին, Գերմանիայի զինւորական ոյժի երգիչներին, լիշեցնում է, որ բնութիւնն ամենքին եղբայրներ է ստեղծել, և քանի կայ պատերազմը, մարդիկ ոչինչ պոյժառ ու զեղեցիկ չեն կարող ստեղծել:

Այս բանւորական ոտանաւորների մեծ մասը նւիրւած են բնտանեկան սիրուն, քիչ ոտանաւորներ չեն նւիրւած նաև բնութեանը: Սակայն այդ պօէտները հազւագիւտ դէպքերում են սահմանափակում բնութեան հասարակ նկարագրութեամբ: Նրա մէջ թաղաւորող ներդաշնակութիւնն ու գեղեցկութիւնը սովորաբար պօէտներին մոտրել են տալիս մարդկային հասարակութեան անկատար կազմի մասին:

Շատ ոտանաւորներով նկարագրում են այն տեսարանները, որոնց մէջ հոսում է պրոլետարիաւոր աշխատաւորական կեանքը: Ընթերցողի առաջ կանգնում են հսկայական դորժարաններն ու Փաբրիկաները, բացում են իրենց սև երախը, անպատակ նաւթահորերը: Օրերի սովորական խաղաղութիւնը վրդովւում է դորժադուլներով: Իսկ աշխատանքի ու պայքարի այդ տեսարանի վրայով սլանում է լա-

ւաղոյն ապագայի, ազատութեան, աւետեալ երկրի, հաւասարութեան ու երջանկութեան արփիական ջնորքը:

Եւ այդ ջնորքը պայծառ կրակով բռնկւում է դարբին-բանաստեղծի «Ջնդան» ոտանաւորի մէջ, վարդապետ յոյսերով է ոսկեղօծում պօէտ-բատրակի թախծոտ երգը, իսկ նա, այդ լաւ տպագայի ջնորքը կախարդական երազանքով ճախրում է երրորդ բանւոր-պօէտի առջևից, երբ գարնանային կանաչ անտառի սաղարթների տակ, մամուռէ գորգի վրայ նստած, նա երազում էր. — կգայ ժամանակ և բանակա-նութիւնը կըյաղթի այժմ թագաւորող ցօփութեան, ատելութեան և կրքին, մարդիկ այլևս այն չեն լինի, ինչ հիմա, երբ հարստութեան աղան որոնումով նրանք աւելի թոյլերին զրկում են մի կտոր հացից ու երջանկութիւնից: Թափանցող միտքը կցրի տգիտութեան խաւարը, ու շատ ճշմարտութիւնների հետ աշխարհի վրայ կըցուլայ և այն, ինչ ամենուրեք թաղաւորող բաօսի միջից միայն պայքարով մարդկանց համար կըստեղծի երկրային պայծառ դրախտ:

Թէկուզ ոտանաւորներն այս բոլոր բանաստեղծների, որոնք չեն էլ երազել գրական փառք, չեն էլ յուսացել, որ իրենց ոտանաւորները տպագրւած կտեսնեն, թէկուզ այդ ոտանաւորները չըպարունակեն որ և է անմահական բան, այնուամենայնիւ ուշադրաւ երևոյթ են նրանք: Թող նրանց յատկութիւնները դրոշմւած չըլինեն հանճարի կնիքով, խոշոր արժէք է ներկայացնում հէնց այդ բնարեղբուների բանակը:

Պօէտական ստեղծագործութիւնը, որ նրանցից դեռ առաջ քշերի բաժին էր, միայն առանձին, տաղանդաւոր անձանց բաժին էր, ինչպէս արդէն երևում է՝ պրոլետարական միջավայրում հետզհետէ սովորական մասսայական երևոյթ է դառնում:

Եւ յետո՛յ մի՞թէ արժանի չէ ամենակենդանի ուշադրութեան և հետեւալ հանգամանքը: Տարբա-կան կրթութեան տէր մարդիկ, անտեսական ծանր վիճակում, որոնք շատ քիչ ազատ ժամեր ունին, ծանրաբեռնւած են ընտանիքով, այնուամենայնիւ պահանջ են դրում իրենց զգացմունքներն ու մտածումները կերպարանաւորել բանաստեղծական ձևերի մէջ:

Մի՞թէ այս բոլորը չեն ապացուցում, որ բանւոր դասակարգը հետզհետէ կըդառնայ ո՛չ միայն քաղաքական զօրաւոր ֆակտոր, այլ և կուլտուրական նոր ոյժ, որի դրօշին գրւած կըլինին վերը չիշւած պրոլետար-պօէտի խօսքերը. «Չար բաղդը չի՛ ընկ-նի մեր հողին, որ ճախրում է գէպի արեւի լոյսը»:

IV.

Եւրոպական խոշոր երկրներից աւելի ուշ կապիտալիստական զարգացման ուղին բռնեց Իտալիան, այդ պատճառով էլ, բնական է, այստեղ աւելի ուշ բան ուրիշ երկրներում ծագելում է սոցիալական-պրոլետարական պօէզիան: Իտալիայում ամրապնդում էր բանւորական շարժումը, սոցիալիզմը թա-

փանցում բնակչութեան՝ աւելի լայն խտերի, և, մասնաւորապէս ինտելիգենցիայի մէջ, դրա հետ դուրսնալու թաղաքային շրջաններն աւելի յանապաքին մտնում կարմիր զբօշակի տակ: Բաւական է չիշատակել տաղանդաւոր դ՛Ամիչիսին, ալդ ո՛չ միայն սոցիալական երանդաւորութեամբ զբաւած բաղմաթիւ պատմաճքների, այլ և մի շարք պրոպագանդային բրօշլերների հեղինակին: Հետզհետէ աւելի յանապաքին էին մտնում կարմիր զբօշակի տակ և պօէտները, օրինակ Կապուան և ուրիշները: Իտալական պօէզիայի մէջ յանապաքին նկարագրում բանւոր դասակարգի կենցաղը, աւելի յանապաքին է նրա մէջ լուռւմ պրօլետարիատի յեղափոխական ծայնը: Բաւական է մատնանշել Ռաֆիգարդիի «Ամսօրներ» պօէման կամ մտաբերել, թէ նորագոյն ժամանակներս, իտալական նոյն իսկ խոշոր և իրենց էութեամբ բուրժուական պօէտներն ինչպէս յանապաքին էին երգում մայիսի մէկը, բանւորական Ինտերնացիոնալի տօնը:

Իտալացի է նորագոյն սոցիալական պօէզիայի ամենախոշոր ներկայացուցչուհիներից՝ մէկը, որի անունը յայտնի է իր հայրենիքի սանմաններից շատ հեռու, որի ոտանավորները թարգմանւած են բաղմաթիւ օտար լեզուներով, նաև ուսերէնս և ալդ ուշադրաւ բանաստեղծուհին, որ իր ողևորութիւնը ներքին է աշխատաւոր մասսայի տրագիքական ներկային ու լուսապայծառ ապագային, ինքն էլ դուրս է եկել ալդ աշխատաւոր ժողովրդի ծոցից:

Ալդ բանաստեղծուհին — Ադա Նեզրին է*):

Նրա հայրը գիւղական բաւարակ էր, որ խեղճերի հիւանդութիւնից, դաժան թորախտից մեռել է շատ վաղ: Ադա Նեզրին զրեթէ նոյն իսկ չէր էլ նանաչում իր հօրը, և երբ աղջիկ ժամանակ ալցելեց հիւանդանոցը, ուր մեռել էր իր հայրը, նրա մտքում յօրինւեց մի ոտանավոր, որի մէջ նա ողբում է հօր վաղաժամ կորուստը:

Ադա Նեզրին մայրը Փարրիկայի բանւորուհի էր, որի առնական թախիծով յի կերպարանքը բանաստեղծուհին յաւերժացրել է «Մայր» ոտանավորի մէջ:

Գործարանումն այն հեղձուցիչ, ուր սրահում մեծ,
բնագարծակ

Պտուռում է միշտ, անդադար անիւր յաղթ մե-
քենայի,

Ուր բաղմաթիւ կին, երեսայ անիւների երգում
վայրի

Տառապում են անհամարձակ, —

Տասինգ տարւայ հացի, շորի կարիքի մէջ

Հինում է նա բարակ թելերն անծայր, անվերջ:

.

Եւ լինում են ծանր ժամեր, երբ ձեռքերը դործի
սովոր

*) Ադա Նեզրին ոտանավորների ժողովածուն լոյս է տեսել հայերէն Յակոբ Յակոբեանի Թարգմանութեամբ, որ, դժբաղդաբար ձեռքի տակ չունենալով՝ ստիպւած եղանք այստեղ բերւած կտորները հապճեպ Թարգմանել:

Թուլանում են յողնածութեան հպումներով
փաստակամ մօր:

Եթէ յանկարծ բախտի մի չար պատահարով
Անկողինը քաշի՞ նրան...
Անկարելի անտկրնկալ... Հիւանդ առանց աղա-
տութեան...

Մեծանում է բանւորութեան երեխան, որը նրա՝
«Հպարտութիւնն է միակ ցուրտ, անհարակ սարը-
կութեան»:

Կաթիլ-կաթիլ ուժերն իր ողջ
Նա կը բամի մանկան համար:
Իսկ անգաղղրում գործում ռնձայր
Թուլութիւնը պառաւ կնոջ
Թէ այցի գալ,—
Յնորք ունի մանկան համար,
Ինչ վաղեմի գարնան փթիթ...

Աւարտելով տարրական դպրոցն և ուսուցչու-
թեան քննութիւն տալով՝ Ադա Նեղրին Միլանի
շրջանի մի փոքրիկ աւանում (Մօտտա Վիսկօնզի)
մի քանի տարի շարունակ դաստիարակում և սովորեցնում էր դիւզադիներին և բանւորներին երեխաներին: Թէ նա ինչպիսի փաշայանքով ու քնքշութեամբ էր վարւում երեխաների հետ, կարելի է եզրակացնել նրա մի ոտանւորից: Փողոցով վազում է ցնցոտիաձայն փոքրիկը: Մայրը դորձարանումն է, իսկ հայրը բանտում: Ի՞նչ դուռս կրկալ այդ բարձի-

թող արւած երեխայից,— ազնիւ բանւոր, թէ՛ ոճրագործ. ի՞նչ է սպասում 20 տարի յետոյ. բանտ, արհեստանոց, թէ՛ հիւանդանոց...

Եւ կամեցալ փողոցի մէջ ագահորար
Քեզ կարօտով սեղմել կրծքիս.

Եղբայրաբար քեզ շնչալ արտասուալից.
«Ես էլ էի ապրում վշտաւ, քեզ պէս անհայր,
Որպէս վայրի ծաղկունանց բոյլ հահիճի մէջ:
Իմ մայրն էլ էր քո մօր նման բանւորուհի.
Եղբայր ենք մենք»:

Մօտտա Վիսկօնզի աւանի խաղաղութեան մէջ
ժողովրդական դեռատի վարժուհին, բնական է, երբեմն սէր է երազել: Ո՞վ կը լինի իր ամուսինը: Ի՞նչ կասի, եթէ իր մեռքը խնդրի որեւէ հարուստ բուրժուա: Նա կը հարցնի նրան.

Տառապել ևս ծովում դաժան վաստակի,
Քունդ կտրած երկար, անհուն գիշերին.
Ի՞նչ զօրաւոր պատգամներով վերնալին
Լի են ծաղիկ կէսօրները քո կեանքի:

Դու չե՞ս խօսում: Անցիր, դնա՛ նորից յետ,
Դարձիր կեանքիդ մեղկ ժամերին կատաղի,
Տարփոտ սիրուդ, դարձիր կանաչ սեղանին.
Չեմ փոխի վառ սէրս դեղին ոսկու հետ:

Թէ դգայիր տանջանքն ազնիւ վաստակի...

Չե՞ս աշխատել, հահոյքների դժբաղդ դո՛հ,
Զարդերի մէջ յաւէտ կորած սնամէջ,

Թուլանում են լողնածութեան հպումներով
փաստակած մօր:

.

Եթէ յանկարծ բախտի մի չար պատահարով
Անկողինը քաշի՞ նրան...

Անկարելի անտկրնկալ... Հիւանդ տռանց աղա-
տութեան...

Մեծանում է բանւորուհու երեխան, որը նրա՝
«Հալարտութիւնն է՝ միակ ցուրտ, աննարակ ստոր-
կութեան»:

.

Կաթիլ-կաթիլ ուժերն իր ողջ
Նա կը քամի մանկան համար:
Իսկ անդադրում գործում անձայր
Թուլութիւնը պառաւ կնոջ
Թէ այցի գալ,—
Յնորք ունի մանկան համար,
Ինչ վաղեմի գարնան փթիթ...

Աւարտելով տարրական դպրոցն և ուսուցչու-
թեան քննութիւն տալով՝ Ադա Նեղրին Միլանի
շրջանի մի փոքրիկ աւանում (Մօտտա Վիսկօնզի)
մի քանի տարի շարունակ դաստիարակում և սովո-
րեցնում էր գիւղացիների և բանւորների երեխանե-
րին: Թէ նա ինչպիսի փայփայանքով ու բնքշու-
թեամբ էր վարւում երեխաների հետ, կարելի է եզ-
րակացնել նրա մի ոտանւորից: Փողոցով վաղում է
յնցատիածածկ փոքրիկը: Մայրը զործարանումն է,
իսկ հայրը բանտում: Ի՞նչ դուռս կրկայ այդ բարձի-

թոյ տրւած երեխայից,—ազնիւ բանւոր, թէ՛ ոճա-
գործ. ի՞նչ է սպասում 20 տարի յետոյ. բանա, ար-
հեստանոց, թէ՛ հիւանդանոց...

Եւ կամեցայ փողոցի մէջ ագահարար

Քեզ կարօտով սեղմել կրծքիս.

Եղբայրաբար քեզ շնչալ արտասալից.

«Նա էլ էի ապրում վշտոտ, քեզ պէս անհայր,

Որպէս վայրի ծաղկունանց բոյլ հահիճի մէջ:

Իմ մայրն էլ էր քո մօր նման բանւորուհի.

Եղբայր ենք մենք»:

Մօտտա Վիսկօնզի աւանի խաղաղութեան մէջ
ժողովրդական դեռատի վարժուհին, բնական է, եր-
բեմն սէր է երազել: Ո՞վ կը լինի իր ամուսինը: Ի՞նչ
կասի, եթէ իր ձեռքը խնդրի որեւէ հարուստ բուր-
ժուա: Նա կը հարցնի նրան.

Տառապել ես ծովում դաժան վաստակի,
Քունդ կտրած երկար, անհուն գիշերին.
Ի՞նչ զօրաւոր պատգամներով վերնալին
Լի են ծաղիկ կէսօրները քո կեանքի:

Դու չե՞ս խօսում: Անցիւր, դնա՛ նորից լետ,
Դարձիւր կեանքիդ մեղկ ժամերին կատաղի,
Տարփոտ սիրուդ, դարձիւր կանաչ սեղանին.
Ձեմ փոխի վառ սէրս դեղին ոսկու հետ:

Թէ յգայիր տանջանքն ազնիւ վաստակի...

Ձե՛ս աշխատել, հահոյքների դժբաղդ զօհ,
Ձարդերի մէջ յաւէտ կորած սնամէջ,

Խեղճ սերունդի խղճուկ զաւակ ինքնագոհ,
Քեզ համար լոկ զղւանք ունիմ հողուս մէջ:

Նա չէր կամենայ ամուսնանալ մեծատան դանձի
հետ, այլ ժողովրդի որդու, բանւորի հետ:

Հեռաւոր Մօտաւ Վիսկոնզի աւանի անդորրի
մէջ ժողովրդական զեռատի վարժուհին երբեմն իրեն
մայր է երեւակայել: Ի՞նչպէս կը կրթէր իր որդուն:
Նրան կասէր, որ «կեանքն—աշխատանք է» և «ման-
կական զգացուն սիրար, որ լի է նշմարտութեամբ,
բարութեամբ և այն ամենով, ինչ մեծ է ու սուրբ,
նա կրցնէր դանձերով»: Եւ մանուկը մեծանալով՝
կգառնար բանւոր դասակարգի ազատագրման մարտիկ:

Եւ հեռաւոր երջանկութեան փառ սիրով
Նա կգարի զրջով դործով կենդանի:
Գորշ խաւարից մարտիկներին կրտանի
Դէպ բոցավառ արշալուններ...

Եւ մարտիկ զանգուրները սեւահեր
Կը զարդարէր զափնիներէ պսակով:

Այդ Նեղրիի ոտանաւորներէ առաջին ժողովա-
ծուն—«Վինակ»—իր վրայ հրաւիրեց ընթերցողնե-
րի ուշադրութիւնը. Մօտաւ Վիսկոնզի աւանից
նրան տեղափոխեցին Միլան, ուր նա վարժուհու
պաշտօն ստանձնեց օրիորդաց, գիմնադիպում: Այս-
տեղ ևս նա շարունակում էր ոտանաւորներ զրել և
շուտով հրատարակեց մի նոր ժողովածու—«Փոթո-
րիկներ»: Նրա փառքը հետզհետէ աճում էր, և տե-

ղի ունեցաւ այն, ինչ—քիչ յետոյ կտեսնենք—նա չէր
կամենում: Ամուսնացաւ միլանցի մի բուրժուայի
հետ, և Այդ Նեղրիից դարձաւ Այդ Գարլանդ: Շու-
տով նա մի աղջիկ ունեցաւ, և այն ամենն, ինչ նա
սպրել ու մտածել էր ընտանեկան կեանքի առաջին տա-
րիները, արտայայտեց «Մայրութիւն» ոտանաւորի մէջ:
Որքան անցնում էին օրերը, այնքան բանաստեղծու-
հին հիասթափուում էր բուրժուական այն նոր մի-
ջավայրից, որով շրջապատւած էր նա: Իշխանական
յօթութեան ու շռայլութեան աշխարհից նրան տի-
րաբար ծղում էին դէպի պայքարի ու աշխատանքի
այն աշխարհը, որից դուրս էր եկել ինքը: Հարուստ
սենիորա Գարլանդը վերստին ցանկանում էր դառնալ
Այդ Նեղրի: Այդ դժգոհութիւնն իրեն շրջապատող
բուրժուական միջավայրից և հին, պրոլետարական
կեանքի ծղող կարօտը որոշակի կերպով արտայայտ-
ւած է նրա վերջին նշանակալից ժողովածուի—«Կեանքի
ու հողու խորքերից»-ի մէջ: Սենիորա Գարլանդը այժմ
նախանձում է և՛ դեղջուկին, որ խաղաղ անցնում է իր
դժւարին նանապարհը, և բանւորուհուն, որ կիրակի
օրը զնում է պարելու իր սիրելիի հետ: Որպիտի՞ դո-
հունակութեամբ նա կապրէր այդ կեանքով: Նա պատ-
րաստ է նախանձելու նաև զեռատի շրջովիկին,
որը անհող թափառում է աշխարհի վրայ անտուն,
անօթեւան: Հետզհետէ պարզւում է, որ նա անկարող
է հոգով ծուլել բուրժուական այն միջավայրին, որի
մէջ է նետել իրեն բախտը:

Խեղճ սերունդի խղճուկ դաւակ ինքնազօհ,
Քեզ համար լոկ զղւանք ունիմ հողուս մէջ:

Նա չէր կամենայ ամուսնանալ մեծատան դանձի
հետ, այլ ժողովրդի որդու, բանւորի հետ:

Հեռաւոր Մօտաւ Վիսկոնզի աւանի անդորրի
մէջ ժողովրդական գեռատի վարժուհին երբեմն իրեն
մայր է երեակայել: Ի՞նչպէս կը կրթէր իր որդուն:
Նրան կասէր, որ «կեանքն—աշխատանք է» և «ման-
կական զգայուն սիրտը, որ լի է ճշմարտութեամբ,
բարութեամբ և այն ամենով, ինչ մեծ է ու սուրբ,
նա կրցնէր դանձերով»: Եւ մանուկը մեծանալով՝
կդառնար բանւոր դասակարգի ազատազրման մարտիկ:

Եւ հեռաւոր երջանկութեան փառ սիրով
Նա կղարկէ զբոլ գործով կենդանի:
Գորշ խաւարից մարտիկներին կլտանի
Դէպ բոցավառ արշալուններ...

Եւ մարտիկ զանգուրները սեահեր
Կը զարդարէ զափնիների պսակով:

Աղա Նեղրիի ոտանաւորների առաջին ժողովա-
ծուն—«Վիմակ»—իր վրայ հրաւիրեց ընթերցողնե-
րի ուշադրութիւնը. Մօտաւ Վիսկոնզի աւանից
նրան տեղափոխեցին Միլան, ուր նա վարժուհու
պաշտօն ստանձնեց օրիորդաց. գիմնադիպում: Այս-
տեղ ևս նա շարունակում էր ոտանաւորները զրել և
շուտով հրատարակեց մի նոր ժողովածու—«Փոթո-
րիկներ»: Նրա փառքը հեաղհետէ սնում էր, և աե-

ղի ունեցաւ այն, ինչ—քիչ յետոյ կտեսնենք—նա չէր
կամենում: Ամուսնացաւ միլանցի մի բուրժուայի
հետ, և Աղա Նեղրիից դարձաւ Աղա Գարլանդ: Շու-
տով նա մի աղջիկ ունեցաւ, և այն ամենն, ինչ նա
սպրել ու մտածել էր ընտանեկան կեանքի առաջին տա-
րիները, արտայայտեց «Մայրութիւն» ոտանաւորի մէջ:
Որքան անցնում էին օրերը, այնքան բանաստեղծու-
հին հիաստթափուում էր բուրժուական այն նոր մի-
ջավայրից, որով շրջապատւած էր նա: Իշխանական
յօթութեան ու շռայլութեան աշխարհից նրան տի-
րաբար ձգում էին գէպի պայքարի ու աշխատանքի
այն աշխարհը, որից դուրս էր եկել ինքը: Հարուստ
սենիորա Գարլանդը վերստին ցանկանում էր դառնալ
Աղա Նեղրի: Այդ դժգոհութիւնն իրեն շրջապատող
բուրժուական միջավայրից և հին, պրոլետարական
կեանքի ձգող կարօտը որոշակի կերպով արտայայտ-
ւած է նրա վերջին նշանակալից ժողովածուի—«Կեանքի
ու հողու խորքերից»-ի մէջ: Սենիորա Գարլանդը այժմ
նախանձում է և՛ գեղջուկին, որ խաղաղ անցնում է իր
դժւարին նանապարհը, և բանւորուհուն, որ կիրակի
օրը զնում է պարելու իր սիրելիի հետ: Որպիսի՞ գո-
հունակութեամբ նա կապրէր այդ կեանքով: Նա պատ-
րաստ է նախանձելու նաև գեռատի շրջմոյկին,
որը անհող թափառում է աշխարհի վրայ անտուն,
անթեան: Հեաղհետէ պարզւում է, որ նա անկարող
է հողով ծուրել բուրժուական այն միջավայրին, որի
մէջ է նեակ իրեն բախտը:

Հոգով՝ յաւէտ զնչուհի՝ միշտ անկաշկանդ և աղատ,
 Զես ազատւի քո նախնի հմայքներից զեղեցիկ-
 Յանկարծ հողուդ կրփարի նոյն կսկիծր հարազատ,
 Որ այս կեանքում ամեն ինչ սուտ է և մեղկ
 ու կեղծիք:

Սենիորիա Գարլանդի ներքին հայեացքի առաջ
 աւելի ու աւելի յաճախ ծառանում է աշխատանքի
 ու պայքարի այն աշխարհը, որից դուրս է եկել գեղ-
 ջուկ-մշակի և գործարանային բանւորուհու աղջիկ
 Ադա Նեղրին: Եւ ահա—թէկուդ մտքով—նա հեռա-
 նալով հարստութիւնից ու շքեղութիւնից՝ զնում է
 իւրաքանչեւ մօտ, այնտեղ «վար», ուր նրան կանչում
 է արեան ու խղճի ծայր:

Փառահեղ դղեակում տրտմեցի յանկարծ,
 Ուր բիւրեղ-անօթում ժպտում են ծաղկունք.
 Լքելով զեղիս կեանքն այս հարուստ մարդկանց՝
 Մեկնեցի, ուր կանչեց ցնորքն անարցունք,
 Ուսից ևս քաշեցի շալը կարմրադոյն
 Ու չթէ բանկօնով դիմեցի հեռուն:

Եւ ահա իմ սուաջ—մռայլ, չտրարաղդ
 Մի աշխարհ-գործարան խիտ-խիտ շարքերով.
 Լսում եմ խորքերից երգ, ողջոյն անյաղթ,
 Անխի պտոյտը հուժկու շառաչով.
 Եւ մանկուտ ինձ ծանօթ ծուխ, փոշի ու ներկ
 Բուրում են ամենուր դիշեր ու ցերեկ:

Եւ սենիորա Գարլանդը մտքով նորից դառ-
 նում է պրոլետարուհի Ադա Նեղրի, ժողովրդական
 վարժուհի և ժողովրդի բանաստեղծուհի: Մտքով մի-
 աջած բանւորների ու բանւորուհիների շարքերին,
 որոնք եռում են գործարանային թաղերի փողոցնե-
 րում, անցած տարիների պէս երգում է նրանց հա-
 մար արի ու հպարտ երգն ապագայի, որին պատ-
 կանում է աշխատանքի ու պայքարի աշխարհը, որից
 նա ինքն է դուրս եկել:

Ծարաւի համար զուլալ ջուր է պէտք,
 Եւ քաղցի համար՝ մի կտոր չոր հաց.
 Բայց երակներում—մեր առողջ նախնեաց
 Հրաշէկ արիւն է հոսում ինչ գետ,
 Եւ ազատութեան արեւն անմահ
 Բիւր շողերով է փայլում մեզ վրայ:
 Հաւատա՛, մենք կենենք խաւար խորքերից,—
 Աշխարհը նեղ կլինի մեր որդոց համար:

Ինչ բովանդակութիւն ունեն ժողովրդի աղջկայ,
 ժողովրդի բանաստեղծուհի Ադա Նեղրիի օտանաւոր-
 ները:

Երկար շարքերով մեր առջևից անցնում են երե-
 խաներն աշխատաւորութեան, որոնք մեռնում են
 հիւանդանոցներում, անգործները, ածխահանները,
 որոնք կոտորւում են հանքերի պայթիւնից, մայրե-
 րը, որոնք իրենց ընտանիքը կերակրելու համար տա-
 ռապում են ոչժիւղ վեր աշխատանքով:

Անհոգ երգեր չեն սրանք, այլ լաց պրոլետարիատի ողբերգական վիճակի վրայ:

«Այստեղից,—ասում է նա իր մի բանաստեղծութեան մէջ,—վրաններից, ուր ապաստանել է աշխատաւոր մարդկութիւնը, դործարանների մուտք կամարներից, ուր շառաչում են պողպատէ հրէշները, բրնձի ճահճոտ արտերում, որտեղից թռնոտ դողող չի է բարձրանում, ամեն կողմից լսում է սրտախտուր, անհատնում լաց, որ ամպի նման խաւարեցնում է արեւը»:

Գեղջուկի ու բանւորուհու աղջիկն այդ լացը վեր է ածել բանաստեղծութեան: Սակայն Ադա Նեգրին յուշեցնում է, չի անիծում կեանքը, թէկուզ և նա ծանր լինի միլիոնաւոր դժբաղդների ու սարսուկների համար: Նրա կրծքի տակ արոփում է աշխատաւոր ժողովրդի սիրտը, որին է պատկանում ապագան:

Ժողովրդի միջից ելայ—և ահա

Վիշտր բոլոր արորում եմ ոտքիս տակ

Ու բայում եմ դէպ լուսադարդ ապագայ:

Ընդհանրապէս, Ադա Նեգրին սիրում է կեանքը. նա չերմօրէն է սիրում աշխարհային կեանքը.— «Կապոյտ երկինքը, փայլուն կրակը, սուրբ երկիրն, այդ վիթխարի հնոցը, որի մէջ անդադրում եռում է աշխատանքը և լսում են յաւերժական աղմուկներն ու մուրճերի զարկերը»: Նա այնքան շատ է սիրում աշխարհային կեանքը, որ դրա համար կրկանենար

«յաւերժ երիտասարդ մնալ, թւերով թռչել ամբողջ տարածութիւնների վրայ, զգալ ամեն տխրութիւն և ուրախութիւն»:

Իսկ քեզ, դաժան մահ, մերժում եմ յաւէտ»:

Այնքան ջերմօրէն է սիրում աշխարհային կեանքը, որ կցանկանար անմահ լինել: «Յանուն այն բոլորի, ինչ ծնւում է աշխարհում, յանուն այն ամենի ինչ աշխարհի վրայ ապրում է յուսով, յանուն բոլորի, ինչ անյաղօրէն դադարաւորին է ձգտում և յանուն նրա, ինչ պալքարում է,—ես կամենում եմ անմահ լինել»:

Ադա Նեգրիի պօէզիան, որ սկզբից հնչում է, որպէս լաց տառապանքի և միլիոնաւոր տանջողների վրայ, այսպէս աննկատելի կերպով է դառնում յաղթական ակկորդներ, որոնք զեղզեղում են սքանչելի, անմահ կեանքի պատւին, փայփոյդ անմահ արեւի պատւին:

«Մուսլ անտառից ծաղկէ պսակներով զուգւած էս գնում եմ, Ես, գեղջուկի աղջիկս, իմ համարձակ հիմն եմ երգում անմահ արեւին»:

Նա, գիւղացու ու բանւորուհու աղջիկը, ամբողջ հոգով հաւատացած է, որ ժամանակակից հասարակութիւնը փող թէ ուշ իր տեղը կրդիջի ուրիշ աւելի կատարեալ, աւելի արդար, հէքիաթի պէս պայծառ ու զեղեցիկ սոցիալիստական կառուցւածքի:

Չիացքով ու շնորհակալութեամբ լի հոգով նա պատրաստ է խոնարհւելու բոլոր նրանց առաջ, ովքեր խօսքով ու դործով պալքարել են մարդկութեան լաւագոյն ապագայի համար:

Ժողովրդական վեհագոյն զործի մարտիկներին
ու հալածւածներին նա երգել է հիասքանչ ոտանա-
ւորներով, որոնց մասին թարգմանութիւնները միայն
մօտաւոր պատկերացում կարող են տալ: Ամարային
մի երեկոյ նրան մի տեսիլ երեւաց: Հեռու հորիզոնի
վրայ, կարմրաւուն մշուշի մէջ ասես սահում են
ուրւականների շարքերը: Նրանց դէմքերը դունատ են,
և զլուխներին՝ փշէ պսակ: Ո՞վ էր դուք: Որաեղից:

Եւ պատասխանում են:

Մենք հսկաներն ենք: Յուզւում էր մեր մէջ
հուժկու տրոփը հուժկու բոցերի...

Խոնարհւում էինք յա իտեան ապրող մեծ մարի
առաջ,—

Միտքը մեզ տւեց փշէ պսակի արնաներկ պար-
զէ:

Տիեզերական միտք որոնելու ճամպին է փռւած
Յողթանակը մեր շիրիմների հետ:

Եւ կախեցին մեզ, տանջեցին երկար,

Մեզ քարկոծեցին, բայց հսկայ ենք դեռ:

.
Նորից թւում է՝ անտառը փարթած,

Դժւար է մարում վերջալոյսն ուշ:

Թռչում է սլացքն ամբոխի երթի—

Կարմիր իրիկւայ շողերով դուզւած:

Փայլում են դէմքերը մարդարէական,

Ծնչում են հանգստով ոչ այս աշխարհի,

Եւ պայծառ աչքերը մեծ ու ակնապիշ

Նայում են ցնծութեամբ եթերի հեռուն:

Եւ այն, ինչի համար պայքարել են նրանք, և
այն, ինչի համար խաչել, տանջել են նրանց, վաղ թէ
ուշ իրականութիւն կդառնայ: Գերեզման կիջնի
բռնութեան, կեղծիքի ու արեան հին աշխարհը, և
փրկւած ու վերածնւած աշխարհի վրայ կը ծագի
նոր կեանքի արեւը:

Այնտեղ, հորիզոնում արդէն զծաղրւում է ազա-
տադրւած մարդկութեան հետզհետէ պարզուող գալիք
իշխանութիւնը:

Գծադրւում է այն նաեւ Ազա Նեղրիի պօէզի-
այի մէջ:

«Սկսւում է նոր օրը» — բացականչում է նա:—

Այդ օրը հեռու չէ: Վերջապէս նա մարդկային ար-
ժանաւորութիւն կսարգէի նրանց, ովքեր դեռ հիմա
տառապում են չար բախտի լծի տակ: Այլ ևս չեն
լինի ոչ պարտւածներ, ոչ չաղթողներ, ոչ տէր, ոչ
ստրուկ):

Ամենից առաջ նա կլինի բնդհանուր, անլուռ
և ազատ աշխատանքի ցանկալի թաղաւորութիւնը:
Ամբողջ աշխարհը մի մեծ գործարան կդառնայ, ուր
բանւորները կաշխատեն ոչ թէ մի խումբ պորտա-
բոյժներ հարստացնելու համար, այլ իրենց ու ամեն-
քի համար:

Ուր էլ նայելու լինիս՝ միևնոյն պատկերը կը
տեսնես:

Խօփը ճեղքելով ծիր տւեց, անցաւ,

Վարեց հովիտներ, դաշտերը պարարտ:

Անիւներն՝ անլուռ, շողին բասծրացաւ,

Եւում է կաթսան բոցերով իր բարկ:
Ազատութիւնն է լսողութեամբ անախ
Իր ձիւնէ-նեմակ թւերը փռել,
Եւումն ջանքերի աշխարհն ասիւ-ափ
Անհունի շուքով թւի տակ առել:

Ոչ միայն ազատ աշխատանքի, այլ և ընդհա-
նուր երջանկութեան թաղաւորութիւնն է այդ:
Մտքով վերացած այդ պայծառ ապտղան՝ բանաս-
տեղծունին չի կարող բաւականաչափ հրճել այդ
երջանիկ սերունդների ամբողջ անսքով: Եւանքը «յա-
ւերժական դարուն», «Մալխեան տօն» է դարձել:

Նոր կեանքի, բազմի, ոյժի շունչն է ողջ
Աշխարհի վրայ հանոյքով շնչում:
Յոյսի, վեհ սիրոյ, վարդերի բողբոջ,
Յաղթանակների շուքն ամեն ինչում,
Ազատ մտքերի և վստահութեան,
Եւ հոգարտ յոյսի աշխարհն է շնչում:

Իսկ ամբողջ աշխարհում ազատ աշխատանքի սո-
ցիալիստական իշխանութեան հաստատուելուց յետոյ
— կրջանաւ պատերազմները, որ միշտ էլ արատա-
ւորել են նրա պայծառ դէմքը, որ մղում են շուկա-
ներ նւանելու և վաճառականների եկամուտներն աւե-
լացնելու համար:

Ազատ աշխատանքի տեղ աշխարհում կը հաս-
տատուի նաև ժողովուրդների եղբայրութիւն:

Ռումբները լռեցին: Անմիտ, վալրի փողերից

Ձի արծակւի էլ երբեք հրաշունչ ծալն, որոտ, ճիչ:

Թշւառ ու մեղկ ծայների, հառաչանքի աշխար-
հից

Ձի դղրդալ դաշտերում ռազմի պէս մահանին՝*)
Եղբայրութիւն—ամենուր: Սուրբ ձգտումով
լեւի-լեցուն

Փոթորկում են բոցավառ մարդկանց սրտերն
իմաստուն,

Եւ հաշտութեան յաղթական հիմն է կարող
թւերով

Ճախրում սիրով ափից ափ, սիրով զուգում
կեանք ու ծով:

Այսպէս է վերջանում Ազա Նեղրիի, գեղջուկի
ու գործարանային բանւորուհու պօէզիան, որ սկզբում
հնչում էր, որպէս բազմապատկանների անկման ու տան-
ջանքների թափուղ արցունքներ, իսկ յետոյ, աննկա-
տելի կերպով փոխւեց ցնծալից հիմնի—կեանքի ու
արեւի պատւին, փոխւեց վեհագոյն սիմֆօնիայի, որ
երգում է ազատ աշխատանքի սոցիալիստական
գալիք աշխարհի, ընդհանուր երջանկութեան
և միջազգային եղբայրութեան յոյսերը:

V.

Անցեալ դարի վերջին քսանհինգամեակում կա-
պիտալիզմն իր ոսկէ սկաւառակը դրեց նաև Բելգի-
այում: Գիւղերն ամայացան: Սկսեց այն «փախուս-
տը դաշտերից», որ Վանդերվելը իր յայտնի դրքի
մէջ աւել է թւերով: Բաղմանում և ծաղկում էին

*) Պէտ—հին յունարէն՝ «ռազմի երգ»:

քաղաքները: Զարգանում էր բանւորական շարժումը:

1880 թւին հէնց բելգիական բանւորներից սկիզբ առաւ Ինտերնացիոնալը վերականգնելու կոչը, որ ջրւեց ու կործանւեց 70-ական թւականներին: Բելգիական դրականութիւնը ևս հետզհետէ ներշնչւում էր սոցիալական բոլանդակութեամբ: Էկկոստան իր վէպերում պատկերացնում էր ինտելիգենտներ, որոնք իրենց կապերը կտրելով տիրող դասակարգերի հետ՝ գնում էին կամ գիւղացիութեան («Սիրոյ ծառա») կամ պրոլետարիատի («Անտուն մարդկանց պաշտպանը») կամ, նոյն իսկ շրջմովիկների ծառ («Նախկին մարդկանց աշխարհից»): Լեմօննիէն իր վէպերի մէջ դրադում է հին աղնականութեան («Վերջին բարօնը») և բուրժուազիայի («Բուրժուայի վերջը») անկման տեսարաններով և բանւորական կեանքի ֆօնի վրայ նկարում է երկրում սկսող սոցիալական շարժումները («Գործարան»):

Զարգացման նոյն ուղիով գնաց նաև պօէզիան: Յանձինս Վերհարնի՝ պրոլետարիատը գտաւ իր ամենախոշոր երգիչն ու տրիբունը: Վերհանի պօէզիան, ասես՝ բաղկացած է երեք մասից, որոնք իրենց ամբողջութեամբ վերաբառադրում են կապիտալիզմի դարգացման ամենազլխաւոր մոմենտները:

«Գիւղի մահացումը» խորագրով ժողովածուի մէջ Վերհարնը պատկերել է «դաշտերից փախչելու» ցնցիչ տեսարանը, որ առաջ է եկել քաղաքի ու արդիւնաբերութեան անման շնորհիւ:

Մահանում են դաշտ ու արօտ
Ծանր սահող կառքերի տակ,
Որ նետել է նրանց վրայ
Ժամանակի տհեղ ոգին:
Եւ քաշում են գեղջուկներին
Քաղաքները մարդակուտակ,
Որ ծծելով բամին իսպառ
Նրանց վտիտ ուժը վերջին:

Գիւղացիները մասսայաբար լքում են իրենց օթեանները և աշխատանք որոնում քաղաքներում: Դաշտերում երգեր էլ չեն լսւում, չեն պատում ջրաղացի անիւները, չորս բոլորը ամայի է ու խաղաղ: Գիւլն ուրւականի է փոխւել:

Ոտանաւորների մի ուրիշ ժողովածուի մէջ, որի վերնագիրն է— «Քաղաք-հրէշներ» — Վերհարնը մեծ վարպետութեամբ նկարագրում է ժամանակակից քաղաքն իր զործարանների, բորսաներով, նաւահանդիսաներով, լաբորատորիաներով, թատրոնների, խանութների, գործնական եռուն կեանքով և շքեղութեամբ ու ալլասերումով:

Մի շարք ուրիշ ոտանաւորների մէջ սերունդների համար Վերհարնը յաւերժացրել է «մեր ժամանակի հերոսներին», ժամանակակից կեանքի տէրերի և աշխատաւորական հասարակութեան ապագայի համար մարտնչողների կերպարանները:

Ահա հին բանկիրը, բորսայի արքան, թագաւոր չօժւած իշխանաւորը, որ իւր կարինէտի լուծեան

մէջ վնասւում է «թագաւորութիւնների բաղդն ու
արքաների վիճակը», որ սարգի նման ամբողջ քաղա-
քը ծածկել է իր ոստայնով, որ ծծում է աշխարհի
հարստութիւնն ու խնայողութիւնը: Բայց յաւիտե-
նական չէ նրա տիրապետութիւնը: Նրա ոտքերի մօտ
տրդէն հասունանում են դայրոյթն ու յուղմունքները:

Ահա մի ուրիշ «մեր ժամանակի հերոս» — Ժո-
զովրդական արիքուն, Ժոզովրդական յեղափոխու-
թեան պարագլուխը:

Մանկուտ մեծացաւ մութ մայթի վրայ,
Զարով կլանւած կեղտոտ փայրերում,
Գործարանի օդն աշխարհն էր նրա,
Ուր կարիքն իր հետ հաշի էր նստում:

Դարաւոր հարստահարութիւնը, որ նշում է
աշխատաւորներին, անդրադարձաւ նրա հոգում ան-
հաշտ առեւթումը դէպի հարստահարողները, և
«նրա կենդանի ու հրեղէն միաբեր, որ ծուլւած է
կրքից», փողոցներում, հանգոյցներում ու հրապա-
րակներում բանւորներին վերջին վնասկան կռւի կոչ
է անում:

Ահա և աշխատաւոր Ժոզովուրդն ինքը: Նա
մարմնաւորւած է լռակեաց ու համբերատար դարբնի
կերպարանքում: Տարուց տարի նա կանգնում է բո-
ցերի ու կայծերի դահոյքով պննւած հնոցի մօտ:

Զդեց հնոցը յաւերժական
Եւ անիծւած մրրիկն ահեղ,

Եւ մարդկութեան ցատումը հին,
Բոցէ ոյժերըն ապստամբ,
Վրէժ, քնքշանք ու տխրութիւն—
Որ հնոցից դուրս դալ մի օր
Մրրիկներով կռած պողպատ,
Սաեղծադործ կայծակի ոյժ:

Դարբինն այսպէս համբերատար ու լռիկ կռում
է մեծ, պայծառ ապագան: Նա հաւատացած է և
զիւնէ, որ Ժոզովուրդը՝

Պայքարի սուրբ խենթութեան մէջ,
Արնոտ կեանքի մեծ օրերին
ձեղք կը բացի բաղդի հակաին:
Եւ իր հսկայ ձեռքերով յաղթ,
Ցնորքներից իր բոցավառ
Սրիւններից ու խաւարից
Կը սաեղծի նոր աշխարհ ու բաղդ:
Եւ զոյները լոյսի, յոյրի
Ցաւերժ արփու ցոլք կը զուգեն:

Ծերունու հայեացքի առջևից սահում է ապա-
գայի պայծառ տեսիլը:

Տեսնում է նա և օրերն այն,—
Երնէկ հիմա լինէր այդպէս,—
Երբ անփախսան քօրալի*) մէջ

*) Քօրալ.—կաթոլիկների և բողոքականների օրհներ-
գումբին: Բողոքական եկեղեցում քօրալ երգում է ամբողջ ժո-
ղովուրդը:

Զուլում է ողջ ցեղը մարդկանց:
 Էլ չի լինի դալի աշխարհ,—
 Սէրը կառնի կեանք, աստղացանց —
 չլու պայծառ իմաստութեան:
 Զար, հպարտանք և ծուլութիւն
 Անյիշատակ կրմահանան,
 Կրտապալեն տաճար ու բանկ,
 Զօրանոցներ, գրասենեակ,
 Կրտապալի և տպարանք,
 չէնց որ հասնի օրը ցամառ:
 Եղբայրական մարդու սիրով
 Կառնեն իրար զրկերի մէջ:
 Խօսքերը սուրբ հեշտ կը լուծեն
 Կասկածները հաղարամեայ,
 Եւ հաւատար եղբոր նման
 Թոյլն էլ կօրհնի բազմը բարի:

Մեր ժամանակների սոցիալական զրամայի
 վերջին դործողութիւնը Վեհարնը պատկերացրել է
 «Արշալոյսներ» պիէսայի մէջ, ուր նւաճողական պա-
 տերազմը ժողովրդական արիւթուն էրնանի՝ միջադ-
 դային խաղաղութեան ու եղբայրութեան զաղափար-
 ների բարոյչի՝ շնորհիւ աննկատելի կերպով փոխուում
 է սոցիալիստական յեղափոխութեան:

Ապստամբում են զիւղացիները, ապստամբում
 են բանւորները: չին աշխարհից ողջ է մնում միայն
 իշխանութեան խոշոր արձանը, այն իշխանութեան,
 որ աշխատաւորութեան սարկացման դործիք և եղ-

բայրասպան պատերազմների պատճառ է եղել: Բայց
 արդէն հաշւած են այդ սոսկալի տիկնիկի օրերը:
 Սպառնական ամբոխը նրա վրայ է նետում, ազա-
 դակելով:

— չին անպիտան!
 — Զղւելի տիկնիկ!
 — Զղւելի հրէշ!
 — Թող կորչի նա!
 — Փշրեցէք, տրորեցէք նրան!
 — Նա անարդել է մեզ:
 — Զարկեցէք նրան, փշրեցէք նրան:
 Բանւորները նողկանքով են զոռում ցած.
 — չեռացէք նա ընկնում է:

Ատելութեան աղաղակների մէջ հսկայ արձանը
 օրօրում և զլօրում է ցած: չրապարակում լու-
 թիւն է վերականգնում:

Եւ ամբոխի մէջ, որ պայծառ ապաղայի ցնծա-
 լից սպասումով լուռ քարացել է, ոսկէ արեւի մօտ
 բարձրանալով՝ հնչում է հին նախաստեղութեան ծայ-
 նը.

— Եւ այժմ թող վերջալոյսը մարի:

Մեռաւ բռնութեան, կեղծիքի ու արեան հին
 աշխարհը, և նրան փոխարինելու է դալիս պրոլետա-
 րական ազատութեան, հաւասարութեան ու եղբայ-
 րութեան աշխարհը:

Ռուսաստանի բանւոր դասակարգը պատմութեան ասպարէզ դուրս գալուն պէս իր հետ բերեց ոչ միայն քաղաքական ազատութեան և սոցիալիստական գալիք թաղաւորութեան պայքարի լուրնդր, այլ և իր պրոլետարական երգերը:

Այստեղ աշխատաւորական գործի առաջին խոշոր մարտիկներէց եղան՝ Պետր Ալեքսէեւ և Ստեպան Խալտուրինը: Առաջինն աքսորւեց Սիբիրի տունդրանները, իսկ երկրորդին էշաֆոտ բարձրացրին: Կրանցից չետոյ բանւոր դասակարգից աւելի յանախ երևան եկան աշխատւոր պօէտներ:

Այն Ժամանակ, երբ 70-ական թւականների վերջերին Ստեպան Խալտուրինի ջանքերով հիմնւեց «Ռուս բանւորների հիւսիսային միութիւնը», գործաբանում աշխատում էր տաւր տարեկան մի երեխայ, որին վիճակւած էր ռուս պրոլետարիատի առաջին պօէտներից մէկը լինել:

Փ. Ս. Շկուլեն էր այդ:

Նա ծնւել էր զիւղական աղքատ բնտանիքում (1868 թւին): Հայրը մեռել էր նրա ծննդից երեք ամիս առաջ: Մայրը պարապում էր օրական աշխատանքով, գլխաւորապէս հարուստների մօտ լւացք էր անում: Երեխան օգնում էր իր մօրը, ջուր էր կրում նրա համար: Մայրը ամենաբարեբար ազգեցութիւնը գործեց որդու վրայ, և նրան դարձրեց այն, ինչ յետոյ դարձաւ:

Յետագայում որդին մի ոտանաւորով իր մօրը հատուցեց սիրոյ և շնորհակալութեան պարտքը:

Մայրս—մի հարքաշ, խեղճ լւացարար—

Միշտ ասում էր ինձ.

«Արի կայ, հարի մի ընկերայիր,

Պայքարիր խեղճի, անշւածի համար,

Պալատներին դու երբէք մի քճիր.

Ազնիւ մնա և խղճուկ վաստակով:

Գիտցիր, բազդ չի տալ ոսկին քեզ երբէք,

Ոչ դովասանքը պարապ ամբօխ:

Երջանկին ուրիշ զաղափաղ է պէտք՝

Խելք, ճշմարտութիւն և աղնիւ վաստակ:

Երեխան դպրոցում մնաց ընդամենը մի քանի ամիս: Ընտանիքը սոսկալի կարիքի մէջ էր: Ստիպւած էին տաս տարեկան երեխային գործարան տալ: Այստեղ, հեղձուկ յարկի տակ, մեքենաների աղմուկի մէջ անցաւ նրա մանկութիւնը:

Ոչ թաւուտների գորգ, ոչ էլ կարկաշ,

Ոչ դիշերային հէքիաթ ու խարոյկ,

Ոչ ծիծաղ, կատակ, ոչ ծաղկէ դահույք—

Ես չեմ իմացել տարիներ առաջ:

Թռչունի նման նեղլիկ վանդակում,

Գործարաններում օրերս անցան.

Եւ ինձ հետ նոյնպէս մանուկներ անքուն

Պրեր անցուցին աղմուկների մէջ:

Ու մենք չիմացանք ցոլքը գիտութեան,

Ոչ գեղեցկութիւն, ոչ գարուն, համբաւ,

Ծանր աշխատանք, յաւ անհունական
Ու տկարութիւնն մեզ բաժին ընկան:

Ի լրումն այդ բոլորի—երեսային դժբաղդութիւն էլ պատահեց: Նա ընկաւ անիւի տակ, և թեւը կտրեցին: Հիւանդանոցից դուրս գալուց նրան աւին կանաչեղէնի խոնուած, որակեղ ծառայեց մինչև քսան տարեկան հասակը: Ազատ ժամերին նա ոտանաւորներ էր զրում: Առաջին ոտանաւորները լոյս տեսան 1890 թւին «Մեր խրճիթը» խորագրով: Դա այն ժամանակն էր, երբ մեզ մօտ բանւորական շարժումը նոր շրջան մտաւ, մասսայական բնոյթ ընդունեց, երբ բանւոր դասակարգը, որպէս յեղափոխական կարեւորութիւն ունեցող ոյժ, պատրաստուում էր հանդէս գալ: Այնուհետև նրա ոտանաւորներն աւելի յանախ լոյս էին տեսնում զոնազան հանդէսներում. նրա անունը սկսեց հռչակւել: 1911 թւին Շկուլեն ի միջի այլոց 129-րդ յօդւածի համաձայն պատասխանատուութեան ենթարկւեց, որպէս «Народный поток» ամսագրի խմբագիր:

Նրա երգերը ծնունդ առան ֆարրիկայի, ծանր աշխատանքի պարագաներում:

Երբ մերենաները լռեցին
Եւ գոլորշու աղմուկն իջաւ,
Իմ մաքի մէջ հուր ծխեցին,
Հիւսեց երգն իմ դառնացաւ:

Ուստի հոսկանալի է, որ Շկուլէի երգերն ամենից առաջ աշխատանքի, ժողովրդի երգեր են:

«Նայեցէ՛ք, մարդւոր դաշտին: Ո՞վ է արտի մէջ խոր ափսոսով անդադար քալում արօրի ետեւից: Ո՞վ է դաշտում պողպատէ գերանդին շարժում փետուրի պէս: Վոլգայի վրայ ո՞վ է «Дубинушка» երգելով քաշում իր ծանրասան բարձան: Իր ծանր կռանով ո՞վ է փշրում թուշ ու պողպատ: Ո՞վ է ցուրտ հողի խորքից փետուրի պէս դրանիտ քաշում: Եւ ո՞վ է մեզ համար երկաթուղիներ անցկացրել մինչև հեռաւոր երկիրներ: Այդ բոլորն արել է մեր հարազատ, զօրաւոր, աշխատասէր հսկան»:

Իր ամբողջ կեանքում Շկուլէր երազում էր երգել այնպիսի երգ, որ սարսափ տարածէր թշնամիների վրայ և «ցնծութեամբ հնչէր հարստահարւածների համար», այնպիսի երգ, «որից խորտակէին բանտերն ու դոզային ապարանքները, այնպիսի երգ, որի ծալներից անապատները զուգւէին ծաղիկներով»: Եթէ նրան յաջողէր այդպիսի երգ, նա հանգիստ խղճով զերեզման կիջներ, նա կատարած կլինէր իր պարտքը աշխարհի առաջ («Ցանկալի երգը»):

Շկուլէն այդ պիսի երգ հաղիւ թէ յօրինած լինի: Դրա համար նրա ոչքերը բաւական չէին, այլ և խանդարում էին արտաքին պայմանները: Սակայն նրա ոտանաւորների մէջ կայ մի բան, որ մօտենում է այդ մտքին, այդ նպատակին: Այդ նրա «աշխատանքի հիմն» է, որն աշխատաւոր ժողովրդի մի իւրապես սակ «Մարտեղիկ» է, բանւորական մարտեղիկը:

Այդ երգի մէջ լաւում է և սէր դէպի աշխատանքը, կեանքի կառուցանողը: Շկուլէր համայն աշխա-

տաւոր ժողովրդին կոչ է անում զիմադրուել ամեն
բռնութեան, սերտ միութեամբ փշրել ամեն տեսակի
շղթայ: Նրա երգերի մէջ հնչում է և՛ ատելութիւն
դէպի հասարակութեան պարագիտ գասակարգերը և՛
հաւատք իր ուժերին, իր մեծ ու պայծառ ապագա-
յին:

Սոսկալի չեն մեզ երբէք մրրիկներն ու չար կա-
րիք:

Որդիներն ենք անասան—մենք սրբազան վաս-
տակի:

Թող տղետը մեր զլխով միշտ էլ լողայ որպէս
ամպ,

Մենք սիրում ենք ողջ հողով անշահագործ աշ-
խատանք:

Միանանք, ընկերներ և եղբայրովի
Խորտակենք շղթաներն արիւնոտ բաղդի:
Լոյսեր մարողին մենք նետենք սլաք,
Եւ իշխան-ոսկուն նոր հարւածներ տանք:
Եւ մարդկանց, որ յաւէտ պարտոյ են ապրում,
Կասենք մենք ինքնագոհ, որ կայ աշխատանք:

Միայն վաստակով
Ապրում ենք մենք:
Վաստակն ամենքին՝

Ճայր ու դարբին,
Կարենք նրանց հետ,
Փշրենք նրանց հետ
Շղթայ, հառաչ,
Եւ միշտ լառաչ:

Շկուկեր բնաւ միակ բանւորական երգիչն ու
բանւոր-երգիչը չէր:

1892 թւին լոյս տեսաւ «Метеоръ» ժողովա-
ծուն: Այստեղ տպագրւեցին Ե. Ե. Նեչայեի առա-
ջին ոտանաւորները:

Նեչայեի ծնւել է 1859 թւին: Նրա հայրը բի-
րիդադործ-բանւոր էր: Պօէտի մանկութիւնը նոյն-
պէս անցաւ առանց ուրախութեան, ինչպէս Շկուկե-
ւի մանկութիւնը: «Իմ երգը» ոտանաւորի մէջ նա
տխրութեամբ է մտաբերում իր մանկութեան տա-
րիները, որոնք բացի զրկանքներից նրան ոչինչ չեն
աւել:

Ապակիների, շիկնած երկաթի
Եւ գործարանի հին տանիքի տակ,
Անծայր շարքերում խեղճ ժողովրդի,
Ցաւերով անցաւ իմ կեանքը խորտակ:
Ո՛չ ալ վերջալոյս, ո՛չ պայծառ օրեր,
Իմ կեանքը թախիծ ու լոկ զրկանք էր:
Անուշ մանկութիւն երբէք չիմացայ,
Չիմացայ անհոգ պատանեկութիւն.
Քաղց, անքնութիւն եղաւ ինձ ընծայ,
Սիրտս չըգտաւ ոչ մի խնդութիւն:
Ձմեռւայ ցրտին՝ հաղիս ցնցոտի,
Տապ ամրան օրին ես մերկ, անօթի:

Երբ նա տասը տարեկան դարձաւ, իր թախան-
ծանքով նրան տարան մի բարի գերմանուհու մօտ,
—ինչպէս պատմում է իր ինքնակենսագրութեան

մէջ, — ամսական 50 կոպէկ վնարով գրադիտութիւն ստորելու: Բայց շուտով այդչափ համեստ թոշակն իսկ ծանր թւաց նրա ծնողներին: Երեխային ուղարկեցին այն ապակու գործարանը («Գուտու»), ուր աշխատում էր և նրա հայրը: Իր ոտանաւորներից մէկի մէջ պօէսը մտաբերում է այն առաջին գիշերը, երբ «քնքոյշ ու խեղճ երեխային դարձրին աշխատաւոր»:

«Կէս գիշերին ինձ բերին գործարան և կադապարը ձեռքս տւին: Քուստ ամենելիս հացով կերակրեցին: Հէնց այդ գիշերը ձեռքերս այրւեցին ապակիով: Այսպէս սկսեց իմ բանւորական կեանքն և վերջացաւ մանկական ազատութիւնը: Սարկութիւնը նաեւ իմ աչքերին, վրիս փաթաթւեց, որին չեմ կարող հեռացնել. տանջում է, խալթում, — ոչ մի օգնութիւն»:

Թէ երեխան ինչպէս էր տառապում այդ «անազատութիւնից», ամենից լաւ փայտւում են իր սեփական խօսքերը. «Օրական տաս և քսան ժամեայ աշխատանք դժոխային շոք, թունոտ փոշի, անմարդկային ծեծ, փառ սնունդ և այլն — շուտով իմ կեանքն անտանելի տառապանք դարձրին, որից զրկւելու փորձեր արի մի քանի անգամ»:

Բայց կեանքի ծարաւն աւելի ուժեղ էր, իսկ կեանքի ծարաւին շուտով միացաւ նաեւ դիտութեան ծարաւը: «Ես կամենում էի՝ ինչ գնով էլ ուզում է լինի՝ կարդալ ու կարգալ. բայց կարգալու ոչինչ չուէի: Ամբողջ գործարանում միայն մի քանի հոգի էին «զրկապ անելով» կարգում. աշխատանքի ծանր

պայմանների պատճառով չէին էլ մտածում կարգալու մասին»: Երբեմն գրադիտութեւն էր գալի գործարան «Կենդանի մեռել», «Եարապաւ Լադարեիչ» և այլ գրքերով: Այդ գրքերից մէկը — «Գալի թաթ ատաման» — ցնցեց պատանուն: «Ես ինքս լցւեցի պատմածքի հերոսը դառնալու ցանկութեամբ, որպէսզի ամենից էլ վրէժխնդիր լինեմ իրենց արիւնոտ փրաւորանքի համար, որ ես տանում և որին համբերում էի մինչև այդ»: Նրա մէջ սկսեցին յուզւել պօէսի դպացմունքները: Իսկ երբ ծանօթացաւ Սուրիկովի ոտանաւորների հետ, նա մտածեց «փորձել իր զգացմունքներն էլ երգով արապայտելու»: 1885 թւին նա ծանօթացաւ մի ժուրնալիստի հետ, որը նրան ամենաջերմ վերաբերմունք ցոյց տւեց: 1892 թւին «Метеоръ»-ի մէջ երևացին նրա առաջին ոտանաւորները, իսկ յետոյ նա աւելի լաւաւ տպագրեց զանազան ժուրնալներում: 1914 թւին նա հրատարակեց իր ոտանաւորները «Իրիկնային երգեր» վերնագրով:

Բիւրեղագործ-պօէսի երգերում հասարակ ու անխորամանկ ձևերով անդրադարձել է այն ծանր դրութիւնը, որի մէջ էր գտնւում 80-ական թւականներին ռուս աշխատաւոր դասակարգը, և զրա հետ միաժամանակ՝ բողոքի այն անող ուղին, որը յետոյ այնպէս որոշակի արտայայտեց իննսունական թւականների պրոլետարական շարժման մէջ:

Իր ոտանաւորներից մէկում («Անդորմենը») Նեչայեր նկարել է այդ դարաշրջանի բանւորի գեղեցիկ

պատկերը, որն արդէն գիտակցել է իր զրուծիւնը և
համբերութիւնից անցել բողոքի:

Ես՝ գործարանի մերկութեան որդիս—
Իրիկունները իմ աչքերը փակ—
Ես չըլսեցի և ոչ մի հէքիաթ:

.....
Մանկուտ ես դարձայ սոսկ աշխատաւոր:

.....
Եւ ես երկար չհասկացայ —
Ո՞ւր պիտ սողալ և ո՞ւր խարել:
Ո՞րն ատել, ո՞րը սիրել...
Ծանր վշտի փոթորկի տակ,
Դժբաղդութեան մրրիկով լի—
Ազատութիւն ես անհայտ,
Սուերացած մարդկանց համար,
Որ մութ ամպի ծածկոցից դուրս
Մեզ էլ փալկի չինչ արշալոյս:
Հարուստների կամքը կուլիտ,
Ստորացում տիրոջ առաջ,
Ծանր փաստակ, գրկանքներ բիրտ...
Մի՞թէ քիչ են չարիքներն այս,
Որ հասկանաք և որոշենք՝
Ձեներ համբերի երբէք, երբէք:

Յուզւած ամենուրեք իշխող հարստահարութիւնից
ու անարդարութիւնից՝ բանւորը, «Անգործ» ոտա-
նաւորի հերոսը հարուստի առաջ արտապայտեց այն

ամենը, ինչ կուտակւած էր իր սրտում և դրա հա-
մար, հասկանալի է, նրան հեռացրին գործից:

Բայց ես չեմ գնայ, որպէս մեղաւոր,
Ու չեմ ողջունի ես ստրակարար
Ոչ վայրի ոյժին և ոչ իր ոսկուն...

«Փարրիկային աշխատանքի որդին»՝ Նեչայեր
պօէզիայի մէջ աշխարհային պայքարից ու չարիքնե-
րից խուսափելու միջոց չէր տեսնում, այլ աշխատա-
ւոր ժողովրդին դէպի ազատութիւն ու երջանկու-
թիւն տանող տատասկոտ ուղին թեթեւացնելու մի-
ջոց: Թէ ով և ինչ պէտք է լինի բանաստեղծը, ար-
տապալտւած է Նեչայեի «Սրինգ» ոտանաւորի մէջ:
Սաւելի պապը մեռնելիս իր թոռնիկին կտակեց
«Ինքնագործ Սրինգը»:

«Պէտք կը դայ քեզ այն, թոռնիկս իմ անտուն.
Պալքարի ժամին—քաջարի ոգի,
Տանջանքի ժամին կրկնի խնդութիւն»:

Երեխան մեծացաւ, հաշակեց բանւորին վիճակ-
ւած ցաւը, սոսկաց, յուսահատեց, յիշեց պապի ըն-
ծան, սովորեց երգել ու նւագել, և ահա՝

Ներշնչումի յոյսերով լի,
Ջերմագին հոգով—
Նա ամենքին ցանկալի
Ընկեր է, եղբայր:
Ով գերի է տխրութեան,
Կարիքին անել,

Նա դիւթում է միշտ նրան
Իր ջերմ երգերով:

Այդ երգերի յիշատակը չի անյայտացել աշխարհի
երեսից:

Եւ պահւում են մինչ հիմա
Այդ երգերն ամենուր.
Երգով հանդիստ կունենայ
Ով դժբաղդ է ու տխուր:

Ձեն մոռացւի նաև բիւրեղագործարանում ծանր
աշխատանքից լիտոյ Նեչայեի հիւսած «Իրիկնային
երգերը»:

Տանջանքի ժամին կրկնեն խնդութիւն,
Պայքարի օրին՝ քաջարի ոգի:

Իննսունական թւականներին աչքի բնկած բան-
ւոր-պօէտների մէջ ուշագրաւ տեղ ունի և Մ. Սա-
ւինը: Հակառակ Շկուլեին ու Նեչայեին նա Կալու-
դայի նահանգի զիւղացու որդի է և հոգեպէս կապ-
ւած է զիւղին: Վար անող դեղջուկը նրա աչքում
ամենաերջանիկ աշխատաւորն է, և նրա վիճակից էլ
նախանձելի բողբ չկայ: Սաւինի «Գութանի երգը»
որը հաղիւ յետ մնայ Կոյցովի խայտնի ոտանաւորից,
դեղջկական աշխատանքի իսկական ապօքէօդն է:

Քայլիւր, քայլիւր, բնկեր իմ ձի,
Եւ փայլուն խով, միշտ մնա սուր.
Հովը ծաղկունք մեղմ կը յուղի,

Վերեն՝ անրիժ երկինք լաղուր:

.

Ազատ հաւքեր և ես, և դու—
Արշալոյսից մինչ արշալոյս.
Հին տանիքի տակ մենք երկու
Արքաներ ենք, իմ աչքի լոյս

Բանաստեղծի հայրը հացթուխ էր Մոսկվայում:
Շուտով Մոսկվա եկաւ նաև որդին: Պատանին՝ կտրւած
զիւղից՝ ծաքով միշտ վերանում էր այնտեղ, ուր անց
էր կացրել իր մանկութիւնը, և մռայլ զգացումները
պաշարում էին նրան, երբ մտածում էր, որ իրենց
ցեղերը ձգւած են անխնամ:

Միշտ նոցնպէս վերեւից ուրախ
Երկինքն է փայլում,
Եւ չորսդին՝ թրթիւ ու ծիծաղ
Ծաղկում արտերում:
Միայն նա խեղճ, տրտում ու որբ
Կանգնել է անոյժ.
Եւ ոսկի հասկերն անոք,
Ձեն շրշում անուշ:
Բուսել են վրան և խոտերը զօրշ,
Վարսակն է կորել
Դաշտերում պարող քամուց բարձրացած
Փոշինների մէջ:

Ջրնայած այս ջերմ սիրուն դէպի զիւղացիական
կենցաղն ու աշխատանքը, Սաւինը քաղաքի պօէտ
է, խիստ հակադրութիւնների երգիչը քաղաքի, ուր

հարստութեան կողքին չքաւորութիւնն է (օրինակ «Յուդարկաւորութիւն» ոտանաւորը), և նրա ոտանաւորներում ցոլում են կերպարանքեր, որոնք բնորոշ են քաղաքի կենցաղի համար: Այլտեղ է և «Գերձակուհին» որը ընտանիքը կերակրելու համար ուժասպառ աշխատում է գեանայարկերում, «արհեստաւորը», որը խոնարհւելով՝ քնել է տաժանակիր աշխատանքի մէջ: Ահա «ընկած կինը», խուճապած զգեստով և աշխարհի գէմքով, որից «ծխախոտի և օդու հոտ է գալիս»

Դէպի դիւզն ունեցած իր սիրով հանդերձ, գիւղացի Սաւինն, այնուամենայնիւ, իր ոտանաւորներն անւանել է «Բանւորի երգեր»: Այդ ոտանաւորներից առաջինները լոյս տեսան իննսունական թւականների կէսերին, իսկ 1902 թւին—լոյս տեսան առանձին զրքոյկով, երբ մեզ մօտ ծայր առաւ գործադուլների պիւրը, նախաւաւելով մեր առաջին յեղափոխութիւնը: Նրա ոտանաւորներից մէկը լի է պատանեկան այն էրոտիկ, այն անչափ անհոգութիւնով, որով աչքի է ընկել ռուս աշխատաւորութիւնն իր պատմական կեսնքի արշալոյսին: Եւ այդ աշխատաւորութիւնն էր, որ յետադարձ վերածնւեց, որպէս դիտակից չեղափոխական արդեւորիտ:

Ձենք զհատի, ոչ կըլդենք,
ձախառներնի՜ր բաց!
Իսկ թէ երգերն այս երգենք—
Օրը կըժպտաս:

Վաստակեցինք և ըմպեցինք.
Ձենք պահի ի զուր.
Միշտ ուրախ ենք, երբ քաղցած չենք,
Աշխարհն՝ օթեան:
Մեզ ինչ դրեակ կամ ապարանք...
Բաղդն է վրանում.
Մեր ուսերին միշտ աշխատանք,
Հոգու մէջ՝ խնդում:
Էյ, կարէք, չքէ՛ր մեր ճամպից.
Յուսով, վաստակով,
Միշտ անվախ ու միշտ անկսկիծ
Կանցնենք ապահով:

Սաւինի ոտանաւորները լի են ջերմ սիրով դէպի բնութեան բոլոր երեւոյթները: Բոլոր ստեղծագործութեանց ու կերտւածների մէջ պօէան իր եղբայրներին էր տեսնում: Ձին («Սաւրասկա») և թռչունը («Թռչուն») նրան նոյնքան մօտ են, որքան և մարդը: Որքան քնքշութիւն կայ, օրինակ, հետեւեալ ոտանաւորի մէջ.

Խղճուկ, իմ գորշ աղունակ!
Ցաւում եմ, զու պիտի սառիս,
Իսկ խրճիթն իմ այնպէ՛ս է տաք...
Ներս թախի իմ պատուհանից:
Հաւատա՛, չունիմ չարութիւն.
Քեզ համար ես կուտ կը թափեմ.
Ձեմ թոզնի քեզ խեղճ ու անառն:

Իսկ եթէ կենդանի արարածները մօտ են պօ-
էտին, մարդիկ բոլորն, առանց բացառութեան՝ առա-
ւել ևս: Նա այնպէս կրկամենար խմբել մի ընտանի-
քի մէջ բոլոր ժողովրդներին, որոնք բնակւած են
աշխարհի վրայ: Իհարկէ, Սաւինը երբէք չի լսել
խաղաղութեան ու եղբայրութեան միջադպ-
շին պրոլետարական մեծ շարժումների մասին,
բայց այդ զաղափարին է նւիրել իր լաւագոյն ոտա-
նաւորներից մէկը, որը արժէքաւոր է յատկապէս
մեր օրերին, այս «Եղբայրասպան» արիւնհեղութեան
օրերին: Ոտանաւորի վերնագիրն է. «Թող լինի խա-
ղաղութիւն»:

Նայեցէ՛ք՝ օրն ինչպէս է փայլում,
Ինչպէս փարթամ են ջրանցքներ ու դաշտ,
Ինչպէս կանաչ են արտ, անտառ ու սար,
Հիւղերն ինչպէս խաղաղ են ու հաշտ...
...
Նայեցէ՛ք—ինչպէս կանգուն է նորից
Քաղաքը սիրուն, մեծ ու հոյակապ.
Ինչո՞ւ պալատից կեղտ, անէծք ու բիծ
Պիտ մարբերներ անվերջ մեր արիւններով:
Մեր ինչի՞ն է պէտք արիւնը եղբօր.
Մեր ունեցածը ամենքին է բաւ:
Թող ժողովուրդները ողջ հեռաւոր
Աւետեն իրար ջերմ սիրոյ համբուս:
Զին, դալլ*) և ուռս, մեծ, փոքրիկ ու ալր—

*) Գալլ—Փրանսիացի:

Կը փարենք իրար, որպէս հին եղբայր:
...
Թող զարթնի մարդը մեր հողիններում:
...
Վաղուց է փայլում արշալոյսն այնտեղ:
Կորչի՛ կռիւը—լափող ամեն ինչ,
Մերժենք առյաւէտ սուր, նեւ ու աղեղ.
Մարդ ենք ամենքս, ոչ արնոտ դահին:

Համայն մարդկութիւնը միջադպշին եղբայրու-
թեան կանչող աշխատաւորական ծայների խմբերդին
այսպէս է հիւսում և իր ձայնը կալուզեցի ղեղձուկի
որդին, «Բանւորի երգեր»-ի հեղինակը:

Ինչո՞ւ ստիպենք, որ տանջւեն տներուն
Իրար կարօտով կին, որդի ու մայր,
Երբ վիճակւած է դժբաղդ ամուսնուն
Արնաքամ լինել կողմերում օտար...
...
Սիրով բորբոքենք թշնամուն անկող,
Սիրենք ամենքին, սիրենք ամեն ինչ,
Փշրենք առյաւէտ սուր, նեւ ու աղեղ...
Մարդ ենք ամենքս էլ, ոչ արնոտ դահին:

VII.

Բանւոր պօէտների մէջ իր նշանաւոր տեղն
ունի նաև ուղտական հրէա Մ. Ռօյկենֆէլդը:
Ծնւել է նա Սուվալկի նահանգում 1862 թւին
և հայրենիքից հեռացել է 80-ական թւականներին,

երբ ցարիզմը ծագող լեզափոխութեան դէմ կռւելով՝ սկսեց իր պագրոմային դործունէութիւնը: Թափառելով աշխարհիս բոլոր երկրներում, ապրելով մերթ հօլլանդիայում, մերթ Պարիզում, մերթ Լօնդոնում, և մերթ Նիւ-Եօրկում՝ Ռօզենֆելդը հայթայթում էր իր օրւայ պարէնը և որպէս ոսկերիչ, և որպէս դերձակ և որպէս ժուրնալիստ: Շուտով նրա երգերն ուշադրութիւն գրաւեցին իրենց վրայ և թարգմանեցին եւրոպական բոլոր լեզուներով: Այդ երգերն իրենց ոգով բաժանում են երկու մասի. «ազգային» և «սոցիալական»: Առաջին մասում նա խօսում է մայրենի վտարանդի ժողովրդի ծանր վիճակի մասին, որը թափառում է երկրի վրայ աննպատակ ու անօթեան «գիշերն այստեղ, իսկ առաւօտեան՝ այնտեղ», կրծքերի մէջ՝ «յաւէտ թախիծ, թախիծ յաւէտ, հառաչի ծով»: Այդ ոտանաւորներին մէկի մէջ նա հաղորդում է, թէ ինչպէս Պլենայի տակ ընկած հրէա զինւորը դերեղմանից դուրս գալով, իր նման պատերազմում ընկած ոռւս ընկերներին մօտը կանչելով, հարցնում է նրանց՝ ազնւաբար են կատարել իրենց պարտքը հայրենիքի առաջ: Նահատակների ուրուականները դրական պատասխան տալով՝ անհետանում են: Հարթութեան մէջ նա մնում է մենակ, և լուսալիտուոդ երկնքի տակ հնչում է նրա տխուր յանդիմանութիւնը. «Մայր հայրենիք! Կեանքիս ծաղիկ հասակում ընկալ քո պատւի համար: Էյ ինչո՞ւ ես հալածում իմ դժբաղդ ժողովրդին»:

Ռօզենֆելդի «սոցիալական» ոտանաւորները պատկերում են բանւոր դասակարգի ստրկական վիճակը: Սկզբում վշտոտ ու ճնշւած՝ նրա երգերը վերջանում են հուժկու անէմքով — հարստահարողների հասցէին և բոցաշունչ «մարգարէութեամբ» — գալիք «Ժողովրդական դատարանի» մասին:

Ինքը կրելով իր ուսերին ստրկական վիճակի ողջ սարսուռները՝ բանաստեղծն աչն նկաշաղկու համար անկեղծ ու պայծառ խօսքեր է գտել:

Կապիտալիզմն ամենից առաջ բանւորին անդէմ, զրեթէ մեքենայական արարած է դարձնում, ծայրայեղ աշխատանքով նրան դրկում է լուսադոյն ապագայի համար կռւելու ընդունակութիւնները:

Պտտում են անիւները և շառաչում վայրենաբար,

Նրանց դանչը ես լսելով՝ հեղանում եմ ալիպէս հիմա.

Անհետ կորալ ալի սոսկալի աղմուկի մէջ, անհետ, տնկար,

Ես էլ դարձայ շատերի մէջ մի անշարժառ խուլ մեքենայ:

Եւ անշունչ են յոյսերն իմ ողջ, աբդէն մեռած ծաքերո ողջ:

Այն ամենն, ինչ սիրեցի, ինչ ապրեցի ես յաւիտեան,

Սրբազան յոյս, ցնորք, երազ և ձգտումներն իմ հրածին,

Բոլորն, ինչ որ սուրբ էր ու լաւ՝ աշխատանք-
ներս մարեցին:
Յոլում են յաղթ անիւները շարժումներով
խենթ, խելադար
Եւ մշուշում և ճնշում են անգլթարար ուղեղս
անոյժ.
Թւում է յար՝ ինչ որ հալեացր, ինչ որ աչքեր
անգլթարար
Հետեւում են յար անբաժան, ինձ հետեւում
առողջ, աշխոյժ.
Եւ յաւիտեան շնչում են առաւօտից մինչ ուշ
գիշեր.
«Դու ոչ միայն մեքենայ ես, այլ աւելին, դու
եղբայր ես»:

Եւ միայն այն ժամանակ, երբ վրայ է հասնում
նաշի ժամը, երբ հեռանում է վարպետը, երբ լուռ
է անիւների զժոխսային դղրուիւնը, երբեմնի սարուկը
վերստին իրեն մարդ է զգում: Եւ հոգու մէջ դէպի
ստրկացնողներն ունեցած ատելութեան հետ անում
է սուրբ ազատութեան ծարաւը:

Բայց զի՛! ահա սուլիչը զի՛ մոայլ մտաւ վար-
պետն էլ ներս.
Անիւի զարկ, սարուկ անկամ, քայլի արօփ,
ծայներ անյայտ...
Նորից քսան ինձ մէջն առաւ... Մեքենան է,
աղմուկն ու ես...

Ոչ մի շշուկ... Մտքերի շուք... Անիւն անշուք...
Աչք հրացայտ. *)

Կապիտալիզմը ո՛չ միայն ծղատում է աշխատա-
ւորին մեքենայական արարած դարձնել, ղուրկ կամ-
բից ու մաքից, այլ և նրան խլում է բնամանիքից,
բնամանիքը խլում է նրանից: Առաւօտից մինչև երե-
կոյ պրոլետար-պոէան աշխատել է հեղծուկ դերձա-
կանոցում: Վերջապէս նա ազատ է, գնում է տուն:

Յողնած եմ վաղուց: Կինս,
Գունաս ընկերս կը պատմի՛ ինչպէս
Խաղում էր որդիս մինչ քնելն իր,
Թէ ի՞նչ էր խօսում, ի՞նչպէս հարցրեց.
— Ո՞ւր է հայրս: Կը դա՛յ տուն
Ե՞րբ կը գայ, մայրիկ ջան, սաս',
Եւ փող կը բերի՞...

Եւ ահա աշխատանքից յողնած, ջախջախւած
առողջութեամբ բանւորը կանգնած է մանկան մահ-
նակալի մօտ:

Շուրթերը շարժւեցին երազում:
— Իմ հա՛յրը... Որտե՞ղ է նա:
Կանգնած եմ. ջարդւած եմ հիմա:
— Մանկիկ, տանջւած եմ ես:
Երբ և է նորից կգար՞Թնես,
Բայց էլ ինձ դու չես տեսնի:**)

*) Թարգմանում եմ Մ. Գալպերինի Թարգմանութիւնից:

**) Ֆէյնշտետի Թարգմանութիւնից:

Ամենուրեք ցնծում են հարուստները, ծիծաղում են ծրիակերները, բնութիւնը ծաղկում է, երանդաւորում են զեղարւեստի ստեղծագործութիւնները— կեանքը, ուրախութեան և երջանկութեան այդ տօնը: միայն նա է մասնւած սարկութեան ու քաղցի: Իսկ եթէ այդպէս է, եթէ ուժեղները հարստահարում են թոյլերին, մի՞թէ պօէտ-պրոլետարը միայն պէտք է պասսիվ նայի ամենուրեք թաղաւորող անարգարութեան: Ոչ, աւելի լաւ է պայքարի մէջ նետւել հերոսի նման:

Եւ եթէ ընկնեմ ես կոյր զնդակով—

Արնոտ ծիծաղս է ապատասխանը ձեր:

Բայց հարստահարողների յաղթանակը յաւերժական չէ: Եւ պօէտ-պրոլետարը զրում է իր ցասկոտ «մարդարէութիւնը»: Գերեզման կիշնի ոսկէ մարմինը, որին երկրպագել են ուժեղներն ու անբանները:

Արեւմտից մինչև արևելք, հարաւից մինչև հիւսիս կանցնի հրեղէն բուքը, չի լինի և ոչ մի անկիւն, և ոչ մի որջ, ուր կարողանային թաղնւել նրանք:

Նման օրին այս փութանցուկ,

Սաւերի և ծխի նման

Կանցնէր և դուք:

Եւ աղատադրւած սարուկները բռնութեան ու խաբէութեան հին աշխարհը կրկերաշինեն ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան հիմունքներով:

Երբ ճնշւեց մեր առաջին յեղափոխութիւնը, նրա զիալի վրայ սկսւեց ռէակցիայի անամօթ պարը: Վրայ հասաւ մռայլ ու փտած ժամանակը: Բոլորն, ինչ կենդանի էր, սրբեց կամ թաղնւեց: Կեանքը սուտի և դաւանանութեան, թուլութեան ու վախկոտութեան անուրդարան դարձաւ:

Այդ մռայլ օրերին բանւոր դասակարգը, յանձինս իր լաւագոյն ներկայացուցիչների, այնուամենայնիւ, լի էր առջիկ հաւատով: Աւելի ու աւելի յանախ երեւան էին զայիս նոր բանւոր պօէտներ, և նրանց երգերի մէջ մխում էր շատ բան խոստացող հուրը: Մ. Գորկին հրատարակեց այդ բանւորներից մի քանիսի զրւածները, ու թէև ճենգուրական պայմանների պատճառով այդ զրւածքների հեղինակներն անկարող էին ազատ արտայայտւել, այնուամենայնիւ զժաւար չէ նրանց մէջ որսալ զայիք նոր յեղափոխութեան մեղեդին:

Այդ բանւոր-պօէտներն արդէն իրենց կապերը կտրել էին մայր հողից: Անընդգրկելի արտերի թաղաւորութիւնից նրանք անցան քաղաք,—

Երկաթի, գրանիտի այգին,

Ծառուղին քարէ աների:

Եւ այտուեղ, դեղշուկից քաղբցի դառնալով նրանք «օրօրող կանաչի մեաւքը» փոխարինեցին «կոշտ քարով», զիւղերը մոռացան, և նրանց թւաջին—

—Որպէս հեռաւոր երազ

Անցած օրերը թաւիշ դաշտերում:

Սոխակի երգերի փոխարէն այստեղ նրանք լսեցին
«սուլոցը փուկ-զօրծարանի»: Գութանի և արօրի
աէրերը դարձան մեքենայի ստրուկ:

Բայց այն մեքենան, որ նրանց ենթարկել է
իրեն, միաժամանակ գիտակցութեան է բերել նրանց.
անիւնների վրայով փոկերը համաչափ սահելով նրանց՝

Երգում են, երգում են անվերջ

Նոր դալիք օրերի մասին:

Թող նրանք մեքենայի ստրուկները լինեն, բայց
միթէ նրանցից չէ կախում աշխատանքի դադա-
րեցնելն ամբողջ աշխարհում, նրանցից, որոնց հնա-
զանդ են «եղմարտութիւնն ու ցասումը»:

Ձեռքի մի շարժում կամ ուսի հպում—

Եւ հեշտ կրմարեն հնոցն ու քուրան,

Որպէս պատրույզն է փոթորկից մարում:

Քաղաքը խլելով նրանցից դաշտերն ու արտերը
դրա փոխարէն տւել է գիտութիւն: Մեքենայի
երբեմնի ստրուկը դալիս է տուն, իր նկուղը,
գիրքը ձեռքն է առնում. պատի ետեւից նրան չեն
անհամբատացնում երեխաների ծիծաղն ու լացը, և
ամբողջապէս կլանւած՝ նա կարգում է աշխարհիս
բանւորների վիճակի մասին՝

Իրենց պայքարով, առաջնորդներով,

Որ տանում են դէպ պայծառ տպագան:

Կամ գարնանը նա զնում է բաղաբից դուրս,
ուր անլեզալ միտինգ է նշանակւած: Հսկիչները
կանգնած են: Հնչում է ընկեր-քարոզչի ճառը: Կրա-
կի պէս փայլում են ունկնդիրների աչքերը: Կկա-
մենային անվերջ լսել այդ ճառը՝ նրա լիշատակը
աւանդելու՝

Գալիք պայքարի քաջ մարտիկներին:

Ու չեն մարի գիտութեան ցանած մտքերը:
Նրանցից կճնւի մեծ միութիւնը: Բաժան-բաժան
միաւորներն ի մի կձուլւեն զօրաւոր բանակի մէջ:

Կը գայ մի օր. շարքերը յաղթ երկաթի պէս
Կձուլւեն սերս ու զօրաւոր:

Եւ կգոռան. «կամենում ենք» և կը թնդան.
«մերն է հերթը».

Եւ կենանք ու խօսք կլինեն մէկ:

Ռէակցիայի փռած օրերին այս պօէտ-բանւոր-
ները բոլոր փոքրոգիներին ու յուսահատներին ասում
էին, որ կենանք չի կարող մեռնել, որ բարձրանում
է նոր ալիքը, որ երևում է արշալոյսի կարմիր շերտը:

Մի՞թէ չի հալւում խաւարը գունատ, հէգ
մթնշաղի,

Մի՞թէ երկինքը կրակով չէ լի...

Այդ մօռլ պահին—միայն նրանց երգերն էին
հնչում աղատ ու հաւատացած՝ պայքարի կանչելով
հին կարգերի դէմ: Մռայլ թեւերը նրանք լաբեցին
առօջգ ձեռքերով և ահա՝

— Որպէս հեռաւոր երազ

Անցած օրերը լծաւիշ դաշտերում:

Սոխակի երգերի փոխարէն այստեղ նրանք լսեցին
«սուլոյցը փուկ-զօրծարանի»: Գութանի և արօրի
սէրերը դարձան մեքենայի ստրուկ:

Բայց այն մեքենան, որ նրանց ենթարկել է
իրեն, միաժամանակ զիտակցութեան է բերել նրանց.
անիւների վրայով փոկերը համաչափ սահելով նրանց՝

Երգում են, երգում են անվերջ

Նոր գալիք օրերի մասին:

Թող նրանք մեքենայի ստրուկները լինեն, բայց
միթէ նրանցից չէ կախում աշխատանքի դադարեցնելն
ամբողջ աշխարհում, նրանցից, որոնց հնա-
զանդ են «ճշմարտութիւնն ու ցառումը»:

Ձեռքի մի շարժում կամ ուսի հպում—

Եւ հեշտ կրմարեն հնոցն ու քուրան,

Որպէս պատրուկն է փոթորկից մարում:

Քաղաքը խլելով նրանցից դաշտերն ու արաւերը
դրա փոխարէն աւել է զիտութիւն: Մեքենայի
երբեմնի ստրուկը գալիս է տուն, իր նկուղը,
զիրքը մեռն է առնում. պատի ետեւից նրան չեն
անհամարապատասխան երեխաների ծիծաղն ու լոյրը, և
ամբողջապէս կլանւած՝ նա կարգում է աշխարհիս
բանւորների վիճակի մասին՝

Իրենց պայքարով, սուաշնորդներով,

Որ տանում են դէպ պայծառ ապագան:

Կամ գարնանը նա դնում է բաղաբից դուրս,
ուր անլեզալ միտինգ է նշանակւած: Հսկիչները
կանգնած են: Հնչում է րնկեր-քարոզչի ճառը: Կրա-
կի պէս փալլում են ունկնդիրների աչքերը: Կկա-
մենային անվերջ լսել այդ ճառը՝ նրա չիշատակը
աւանդելու՝

Գալիք պայքարի քաջ մարտիկներին:

Ու չեն մարի զիտութեան ցանած մտքերը:
Նրանցից կծուի մեծ միութիւնը: Բաժան-բաժան
միաւորներն ի մի կծոււեն զօրաւոր բանակի մէջ:

Կը գայ մի օր. շարքերը չաղթ երկաթի պէս
Կծոււեն սերտ ու զօրաւոր:

Եւ կգոռան. «կամենում ենք» և կը թնդան.
«մերն է հերթը».

Եւ կեանք ու խօսք կլինեն մէկ:

Ռէակցիայի փառած օրերին այս պօէտ-բանւոր-
ները բոլոր փոքրողիներին ու չուսահաւաններին առում
էին, որ կեանքը չի կարող մեռնել, որ բարձրանում
է նոր ալիքը, որ երևում է արշալոյսի կարմիր շերտը:

Մի՞թէ չի հալւում խաւարը գունատ, հէգ
մթնշաղի,

Մի՞թէ երկները կրակով չէ լի...

Այդ մօռալ պահին—միայն նրանց երգերն էին
հնչում աղատ ու հաւատացած՝ պայքարի կանչելով
հին կարգերի դէմ: Մռայլ թեւերը նրանք լաբեցին
առօրգ մեռքերով և ահա՝

Երգում եմ բարձր աչքով յոյսերով,
Երգով վրդովում անդոյրն անկեանք:

Բոլոր փորրոզիներին ու յուսահատներին այդ
բաներ-սօսանքն ասում էին.

Համարձակ եղէք: Կասկածը հեռու:
Տեղ չունի փախը ջինջ արշալոյսին:

Լքումի և յուսախաբութեան տարիները նրանք
ախպէս նախատեսնում էին դալիք նոր չեղափոխու-
թիւնը, որ ներկայումս փաստ է արդէն:

Նրանք իրենց միայն կարասկաներ էին համա-
րում: Խորապէս հաւատացած իրենց դատակարգին,
պատմութեան ընթացքով կանչւած տապալելու ցա-
րէղմի լուծը՝ նրանք միաժամանակ հաւատում էին,
որ ժամանակով իրենց շարքերից դուրս կդայ
առաջնակարգ սօսէտ, պրոլետարիատի մեծ սօսէտ,
բաները դատակարգի ուսուցիչն ու պարագլուխը:

Նրանք իրենք—միայն առաջին ուրախութեան
շունչն են, միայն առաջին կանաչների ծիւրերը:

Իսկ յետոյ՝

Կր դայ ժամը հասուն յոյզի,
Եւ կարեւի նպատակը մեր.
Մեծ սօսէտը միշտ կըլուզւի
Բաներների երգովն այս տկար:
Եւ նա կըդայ մեծ ու հզօր,
Որպէս մըրկի ուրախ որոտ:

Նրա ուժեղ և կրքոտ ծայնի մէջ այն ժամանակ
կլաւի և նրանց աւելի թօյլ ու վստահ, բայց ոչ
ապարդիւն հնչած ծայնը—

Եւ երգերում այն բոցափառ
Կննչեն թօյլ տաղերն էլ մեր:



ՆԵԱՏԻԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	տող	տպւած է.	Պէտք է լինի
5	28	Հոնս	Ջոնս
7	23	Էլլիորդն	Էլլիոտն
12	4	տարւած և	տարւած է
12	11	և ոչ էլ	և ոչ էլ
13	10	հատընտիրբում,	հատընտիրներում,
17	1	Քաղցը ամեն մի տան:	Քաղցը հիւրէ ամենմիտան:
21	23	ջախջախելով՝	ջախջախելով՝
23	14	նախահայրը համարում է	նախահայրը համարում է
27	15	իրականացան	իրականացման
39	25	երախը, անյատակ	երախը անյատակ
46	17	Եւ մարտիկ զանգուրները	Եւ մարտիկի զանգուրները
49	13	արին է հոսում	արինն է հոսում
56	19	Յանձինս	Յանձինս

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ռ. Սոց. ֆեդ. խորհուրդների Հանրապետության Սահմանադրությունը.

2. Ն. Լենին—Նամակ Ամերիկեան Բանւորներին. դինը՝ 1 ր.

3. Վ. Ֆրիշէ—«Պրոլետարական պոէզիան» դինը՝ 2 ր.

4. ՆերչԱԿ—«Բազմի դէպքերը (Կոմունիստական Կուսակցութեան թուղթիկի լաւելաձով)» դինը՝ 75 կ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՄՆԵՆ.

1. Կ. ՄԱՐԻՍ և Գ. ԷՆԳԷԼՍ—«Կոմունիստական Մանիֆեստը» — Պլեխանովի, Կաուցկու և ճեղինակների լաւաջարաններով. Թարգմ. Պ. Մակինցեանի.

2. Զիշերին—«ԲՐԵՍՏԻՑ ՅԵՏՈՅ» (Զեկուցում խորհուրդների 5-րդ Համագումարին).

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

1. Կ. ԿԱՌԻՑԿԻ—«Դեպի իշխանութիւն».

2. Ն. Լենին—«Կարլ Մարքս» — Համառօտ կենսագրութիւն և մարքսիզմի տեսութիւնը.

3. Ն. ԲՈՒԽԱՐԻՆ — «Դասամարտը և լեղափոխութիւնը Ռուսաստանում».



ՀՀ Ազգային գրադարան



NL0166494

